



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 33 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայաստանի Գերագոյն խորհրդի որոշմամբ՝ 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրաքուէ տեղի ունեցաւ ԽՍՀՄ կազմէն դուրս գալու եւ անկախ պետականութիւն հաստատելու կապակցութեամբ:



Ընտրական իրաւունք ունեցող քաղաքացիներու 94,99%-ը կողմ քուէարկեց: Երկու օր անց հանրապետութեան Գերագոյն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ, ինքնիշխան հանրապետութիւն:

ԱՐՑԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՍԵՊՏԵՄԲԵՐ 19-Ը ՀՈՉԱԿԱԾ Է «ԱՐՑԱՆԻ Ց ԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՕՐ»



Սեպտեմբեր 18-ի երեկոյեան, Արցախի աքսորեալ՝ բռնի տեղահանուած խորհրդարանը յատուկ նիստ գումարած է «Տօներու եւ յիշատակի մասին» օրէնքին մէջ փոփոխութիւն կատարելու օրակարգով:

Խորհրդարանը՝ Սեպտեմբեր 19-ը հռչակած է «Արցախցիներու ցեղասպանութեան օր»:

Հ.Բ.Ը.Մ.-Ի ՃԱՍԲԱՐԸ՝ 60 ՏԱՐԵԿԱՆ

19 Յուլիսին, 400-է աւելի ճամբարի մասնակիցներ, պատասխանատուներ, բարեկամներ ու ընտանիքի անդամներ ունեցան ընտանեկան հա-



ւաք՝ նշելու ճամբարի 60-ամեայ տարեդարձը: Հին յիշատակներով ներկաները վերապրեցան իրենց անցեալի ընկերային կեանքը: Ճամբարը կը գտնուի Նիւ Եորք նահանգի տեսարժան վայրի մը մէջ, ուր ամբար արձակուրդին պատանիները կը հաւաքուին նոր երդիքի տակ:

Օրուան գլխաւոր բանախօսն էր Միութեան նախագահ Պերճ Սեդրակեան, որ միշտ հաւատացեալը եղած է ճամբարի ընկերային բարիքներուն:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԹԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Սեպտեմբեր 21-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ, Մայր Աթոռի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եւ Սուրբ Վարդան մատուցեցին արարողութեամբ Հանրապետական մաթթանը:



Սրբազան արարողութիւնը հանդիսապետեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինի Արտաքին յարաբերութիւններու եւ արարողակարգի բաժնի տնօրէն Տ. Նաթան արքեպիսկոպոս Յովհաննիսեան:

Հոգեւորականաց դասն ու ներկայ հաւատացեալ ժողովուրդը Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնին առիթով աղօթք բարձրացուցին առ Աստուած հայրենիքի խաղաղ, ապահով ու անվտանգ կեանքին համար:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

17 սեպտեմբերին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Համաշխարհային Հայկական երկրորդ գագաթաժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերին 60 երկիրներէ ժամանած 1000 հիւր (ղիւսանագէտներ,



լրագրողներ, քաղաքական եւ ազգային-հասարակական դէմքեր), նպատակ ունենալով ապահովել Սփիւռքի ներգրաւուածութիւնը Հայաստանի օրակարգային հարցերու ծիրէն ներս, ինչպէս նաեւ ծառայել որպէս ռազմավարական քննարկումներու, համերաշխութեան, փոխըմբռնման եւ հանդիսանալ լուծումներու կամուրջ:

Գագաթնաժողովի բացման արարողութեան ելոյթներով հանդէս եկան ՀՀ Նախագահ Վահագն Խաչատուրեան, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան, Ազգային ժողովի փոխնախագահ Յակոբ Արշակեան, Ափիւքի Գործերու գլխաւոր յանձնակատար Զարեհ Սինանեան եւ ԱՄՆ հայազգի նախկին քոնկրետական ճեքի Սփէյըր:


Գագաթնաժողովը ունեցաւ վեց կլոր սեղանի քննարկում գլխաւորաբար՝ «Հայկական շահերու պաշտպանութիւնը եւ լոպպինկը» խորագրով, որուն իրենց մասնակցութիւնը բերին ԱՄՆ քոնկրետական ճեքի Սփէյըր, Լիբանանի Խորհրդարանի անդամ՝ երեսփոխանուհի Փոլա Եագուպեան, Բալիֆորնիա նահանգի սենատոր՝ Էմբընի Բորթանքինօ եւ Ամերիկայի Հայկական Համագումարի կողմէ քոնկրետական յարաբերութիւններու գծով տնօրէն՝ Մարիամ Խալոյեան:

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՏԻՆԱԼ ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՐԱՃԱՆԵԱՆԻ ԱՖՈՒՏ ՄԱՐՄԻՆԻՆ

53 տարի Հռոմ մնալէ ետք, կարտինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան կաթողիկոս պատրիարքին անփութ մարմինը Հինգշաբթի յետմիջօրէին հասաւ Պէյրութի օդակայանը, ուր արժանացաւ պաշտօնական ընդունելութեան:



Պէյրութի Նահատակաց հրապարակին վրայ երեկոյեան տեղի ունեցաւ կարտինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեանի մարմինը հանդիսաւոր ընդունելութեան արարողութիւնը՝ նախագահութեամբ Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. կաթողիկոս պատրիարքին եւ մասնակցութեամբ պետական, կրօնական, քաղաքական եւ հասարակական գործիչներու ու Լիբանանի բոլոր համայնքներու ներկայացուցիչներու:



Ժողովրդային հանդիսաւոր ընդունելութեան ընթացքին խօսք առին Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. կաթողիկոս պատրիարքը, մարոնի համայնքի պատրիարք կարտինալ Պշարա Ռայի, վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի եւ



Պէյրութի Հայ Կաթողիկէ պատրիարքական թեմի օգնական եպիսկոպոս Գրիգոր եպս. Պատիշահ:

Լիբանանեան ազգային եւ հայկական հոգեւոր երաժշտութիւններով հանդէս եկաւ լիբանանեան բանակի նուագախումբը:

Հանդիսաւոր արարողութեան աւարտին կարտինալ Աղաճանեանի անփութ մարմինը թափօրով տեղափոխուեցաւ եւ ամփոփուեցաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ-Սուրբ Եղիա աթոռանիստ եկեղեցոյ մէջ գտնուող նորակառոյց շիրիմին մէջ:

Աղաճանեանի երանացման եւ սրբադասման դատի հանդիսաւոր բացումը կատարուած էր 28 Հոկտեմբեր 2022-ին, իսկ 23 Փետրուար 2024-ին աւարտած էր անփութ մարմնի կանոնական հետազօտութիւնը եւ վաւերականութիւնը:

ՈՒՌՈՂ ՆԱՅԵՆՔ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՁՔԵՐԻՆ, ՈՐ յԱՊԹԱՆԱԿԱՆԵՐ ԿԵՐՏԵՆՔ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Հոդը հարուստներն են տնօրինում, իսկ հայրենիքի տերն ու պաշտպանը
աղքատներն են
Հին արեւելեան ասացումը

Մեր քաղաքական դերակատարները միաբերան թեժ աշուն էին կանխատեսում, սակայն սեպտեմբերը կիսուեց, իսկ անակնկալ անորոշությունները դեռ առջեւում են։ Գուցէ ինքս եմ կեանքից հետ մնացել. շշմած կանգնել եմ ժամանակների մեծ խաչմերուկում, որտեղ ներկան շրջուեց եւ անցեալը սուրաց՝ ապագան հեծած։ Ակամայ մտածում եմ՝ մի՞ հետեւիք մեծամասնությանը, միշտ չէ որ նա իրաւացի է, աւելի լաւ կը լինի հետեւել ճիշդ ճանապարհին, քանզի ազնուքիւնը՝ կեանքում միակ բանն է որը երբեք չի արժեզրկուում։ Կեղծատրուներին էլ հանդուրժում են, բայց չեն սիրում։ Դա պետք է ամեն ոք իմանայ։ Հիմա էլ հին ու նոր դէմքեր դէպի երոմիություն գնալու հարցով հանրաքուէի կոչեր են հնչեցնում։ 200 տարի առաջ էլ հայերի տափակ ուղեղներում կաթեցրին այն միտքը, որ աւելի լաւ է Ռուսաստանի *գուբերնիա* դառնալ, քան՝ թուրքական վիլայեթ ու այդ ժամանակներից ռուսն ու թուրքը պարբերաբար վնասում, կոտորում ու վտարում են մեզ մեր հայրենիքից։ Իսկ ես մտածում եմ, որ Հայաստանը ինքնիշխան պիտի մնայ, տէր կանգնի իր հայրենիքին ու արժանապատւութեանը։ Իսկ որ ոմանք ահաբեկում են, թէ Հայաստանն ինքնաբաւ չի եւ չի կարող ինքնուրոյն լինել, ապա յստակ է, որ մեր օրերում ոչ մի երկիր էլ բացարձակ ինքնաբաւ չի։ Հետեւաբար, որպէս մեր մոլորակի ժողովուրդների ընտանիքից, մենք պիտի կարողանանք դրա արժանապատիւ անդամներից մէկը լինել, արձագանգել այդտեղ ընթացող գործընթացներին, փորձել բարեկամանալ բոլորին եւ դրանից օգուտներ քաղել ի շահ ժողովրդի։



Երգիծանկար՝ Թորոյի, յատուկ «Պայքար»-ի

Ուրբախնական բանակի յարձակումը ՌԴ Կուրսկի մարզում, անապատելի եւ անկանխատեսելի էր բոլորի համար։ Սակայն խնդիրը ոչ թէ անապատելիութեան եւ անկանխատեսելիութեան մէջ է, այլ ռուս-ուրբախնական պատերազմի յետագայ ընթացքի եւ հնարաւոր հետեւանքների գլոբալ ազդեցութեան։ Ի հարկէ, տեսակէտներն ու տեղեկատուութիւնն այնքան իրարամերձ են եւ հակասական, որ կռահել դէպքերի ընթացքը դառնում է բաւականին դժուար։ Արեւմուտեան կենտրոնները փառաբանում են ուրբախնական բանակի գործողութիւնները, յայտարարում, որ ռուսները հիմա պիտի մտահոգուեն ոչ միայն ազգային անվտանգութեամբ, այլեւ անվտանգ ազգութեամբ։ Ռուսական աղբիւրներն այն համարում են ահաբեկչութիւն եւ արկածախնդրութիւն, որն աւելի է բարդացրել Քիւեյի վարչակարգի դրութիւնը։ Կուրսկի համար մղուող պայքարի յետմախտրքի վրայ շատերի ու նաեւ մեր համար զարմանալի էր Փութինի այցը Պաքու։ Բայց այստեղ զարմանալի ոչինչ կայ։ Կուրսկում ուրբախնական կամ աւելի ճիշդ՝ ՆԱԹՕ-ի առաջխաղացումը կրում է ժամանակաւոր բնոյթ։ Ինչքան էլ տեղիս գրանդակները ուրբախնացիների գովքն անեն, որի առաջխաղացումը մեզ համար կամ եղած կամ չեղած, Արեւմուտքն ընդհանուր առմամբ տանուլ է տալիս։

ԱՄՆ-ն էլ շահագրգռուած չէ Իսրայէլի կողմից շարունակուող պատերազմի ընդլայնմամբ եւ մեսիջներ է ուղարկում Իրանին՝ Իսրայէլի վրայ հնարաւոր յարձակման բացառման ցանկութեամբ։ Իսրայէլը հասկանալով, որ ԱՄՆ-ը կողմ է Գազայում զինադադարին, Ատրպէյճանից իր ուժերն է քաշում, որպէսզի սիրաշահի Իրանին։ Զանգեզուրի «միջանցքի» պահանջի հարցով Արեւմուտքն Ատրպէյճանին ստիպում է խնդիրն ապագային թողնելու մասին յայտարարութեամբ հանդէս գալ։ Երտողանն էլ իր եղբայր Ալիեին հասկացնում է, որ առանց իրեն գրեթէ ոչինչ է, նոյնիսկ Արցախի գրաւումը իր հետ կապելով եւ այլն։ Կարծում եմ այս իրավիճակը յանգեցրեց նրան, որ փորձուած Փութինը շտապ սկըսում է խփել Արեւմուտքի խաղաքարտերը։ Ատրպէյճանն այս պարագայում կրկին համաձայնում է հայերի հետ հաշտութեան հարցը տեղափոխել կրկին «ռուսական հարթակ»։ Մեր վերնախաւին էլ հասկացրին, որ՝

- Հայաստանը կրկին պէտք է վերադառնայ «ռուսական» հարթակ։
- Զանգեզուրեան ճանապարհը ինքն է վերահսկելու եւ եթէ հայերը ճիշդ գործեն՝ չի լինելու որեւէ արտատարածքային միջանցք։ Ատրպէյճանն այս առումով խօսք չունի։ Մահմանազատման հարցն էլ իր քաւորութեամբ է լինելու։
- Յոյս մի կապէք Ռուսաստանի փլուզման հետ։ Ուրբախնացիները չունեն մարդկային ռեսուրսներ, Արեւմուտքը Ուրբախնայի տեղը յաւերժ չի կռնելու։
- Չեղենքսին արդէն հասկանում է, որ Արեւմուտքն իրեն կը գոհաբերի, դրա համար ներխուժեց Կուրսկ, հիմա նրա ճակատագիրը ռուսների ձեռքում է։ Նա համակողմանի խփում խաղաքարտ է։

Մեր գրածն ի հարկէ, ռուսասիրութիւնից չի բխում։ Այդպէս կարող են մտածել յիմարներն ու ծախուները։ Մենք ելնում ենք այն իրողութիւնից, որ փոխելով հարթակը՝ տուեցինք Արցախը՝ դիմացը միայն կեղծ դատավճիռներ շահելով։ Կորցրեցինք տաւուշեան գիւղերը, որոնք եթէ սահմանագատում էլ չլինէր, ապա նախկին կարգավիճակում էին այսօր։ Ատրպէյճանը երբեք չէր համարձակուի առաջ գալ։ Արեւմուտքը մեզ գցեց։ Ռուսներն էլ հնարաւոր է մեզ աւելի փոքրացը-

նեն, եթէ ճիշդ չհասկանանք իրավիճակը։ Յիշենք, թէ ինչ էր ասել նոյն Փութինը՝ «Քաղաքականութիւնը փոխզիջումների մշակոյթ է»։ Եթէ սա հասկանանք, մեզ կը սկսեն յարգել։ Իսկ մնացածը պատուախնդրութիւն դաշտից է։ Ինքնավստահ Իլիամն համարեա ծնկաչոք է։

Ինչ ենք կորցրել, ինչի հետեւից ենք գնում։ Կարելորը տեսականօրէն դեռ ոտքի վրայ ենք։

Այսօր խիստ կարեւոր է չվախենալ եւ ամեն ինչ սկսել նորից։ Հարկաւոր է ըմբռնել, որ վերջակէտ դնելուց յետոյ մեծատառով է սկսում ամեն նորը։ Յիշել, որ հայի համար գիտելիքը գէնք է, ինքնահաստատուելու եւ ինքնապաշտպանելու գէնք։ Դէ ուրեմն գիտելիքներով զինուենք ազգովի։ Թէ չէ ժողովրդավարութեան քողի ներքոյ դարձել ենք ծայրայեղ բամբասող եւ զրպարտող հասարակութիւն։ Մէկի վրիպակը միւսի աչքին գերան է, իսկ սխալը՝ աչք հանող չօփ։ Իսկ դա ծանր մեղք է։ Պիտի սքափուենք եւ պայքարենք այս կործանարար չարիքի դէմ, իրաքանչիւրս մեզ հաշիւ տանք մեր արածների համար, դառնանք ճշմարտախօս։ Ըմբռնենք, որ նրբանկատութիւնը՝ երբեմն յիմարին յիմար անանելու մեծ գայթակղութեանը դիմանալն է...

Մարդն ընդհանրապէս չի կարող մոռնալ լեզուի պատճառած վէրքերը։ Կտակարանը պատուիրում է ներել անգամ թշնամուն։ Բայց թշնամու վէրքն այնքան մեծ սպի չի թողնում, որքան բարեկամինը։ Ամէն անգամ՝ առիթը հանդիպելիս, կամա-սակամայ գիտակցութեանդ մէջ կրկին արթնանում է յիշողութիւնը, եւ սիրտը ճնշում է ցաւագին։ Ուրեմն՝ մարդն ի գօրու չէ ներելու այդ բառի քրիստոնէական իմաստով, քանզի հոգու մէջ խրուած մեխը, որ ներելու մեծագոյն ցանկութեամբ դուրս է քաշել, իր հետքը, այնուամենայնիւ, թողել է։ Նա ոչ թէ ներել է, այլ ուղղակի քինախնդիր չի եղել։ Դա էլ մեծ առաւելութիւն է։ Այդքանն էլ բաւական է մարդուն՝ հասկանալու, որ իր վիրաւորանքն էլ ուրիշի սրտում կարող է նոյն հետքը թողնել, ուստի պիտի կարողանայ համբերատար լինել, խօսելուց առաջ ծանրութեթեւ անել ասելիքի հետեւանքները, լաւ մտածել արձակած նետի պատճառելիք վերքի խորութեան մասին։ Սակայն ամէն ոք չէ, որ կարող է միճել վերջ հաւատարիմ մնալ իր սկզբունքներին։ Ամենահեշտը դիւրին եւ նպաստաւոր պահերին սրտածմիկ բառերով հաւատարիմ ձեւանալն է։ Իսկ թէ ինչու՞ է այսպէս, որովհետեւ ամէն պահը փոփոխական է եւ անկրկնելի, բայց յարեմի մէջ չի փոխում ոչի՞նչ...։ Ազգերի դէպքում էլ նոյնն է։

Նախկինում մարդիկ իրար հետ շփում էին, գիտամէջ ու հրապարակ էին դուրս գալիս տեղեկատուութիւն ստանալու, հեղինակաւոր մարդկանց լսելու համար, հիմա սոցցանցեր մտած երկիր ենք փրկում։ Իսկ արդիւնքում Արցախից մնացին դրօշն ու արցախցին, Հայաստանից էլ՝ հնդիկը, թուրքն ու այս վարչախումբը։ Կեանքս էլ գերի մնաց գրին ու կորստի անբուժելի ցալին։ Ուզում եմ գոռալ՝ փնտռող ու չգտնող ազգ իմ, սիրտս էլ տողերիս հետ գերի մնաց քո վէրքերին։ Եւ այս համատեքստում ուզում եմ ողջ պետական կառավարման համակարգի ուշադրութիւնը հրափրել հետեւեալի վրայ։ Շատերին թւում է, թէ ապագայ մարտական գործողութիւնները հնարաւոր է լինեն միայն առաջնագրծում, մինչդեռ մերօրեայ իրականութեան մէջ բազմաթիւ են նախադէպերը, երբ հակամարտող կողմերը ռազմական թիրախներ եւ ենթակառուցուածքներ են խոցում միմեանց թիկունքում։ Այնպէս որ, բացի հեծանիւ քշելուց եւ խորոված ու խաշլամայ ուտելուց, պետական կառավարման ողջ համակարգը՝ սկսած ուժային կառույցներից, վերջացած տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներով, պէտք է պատրաստ լինի նաեւ այդօրինակ սցենարներին։

Համոզուած եմ, որ Սփիւռքը Հայաստանի հետ մի հօգը երկիր կը լինի, աշխարհ կը կառուցի։ Յաճախ է ինձ մօտ հարց առաջանում՝ էս վարչախումբն ինչի՞ մաս-մաս ժողովրդին, իրենից վանեց սփիւռքը, եկեղեցին...։ Ու այսօր անգրագիտութիւնն ամէն ճեղքով սողոսկում է մեր կեանք ու դառնում անճոռնի առօրեայ, ոչնչութիւնը մեղաւոր փնտռելով լցնում է իր դատարկ տարածութիւնը։ Ակնյայտ է, որ անհաւասար կարգավիճակում մարդիկ եւ պետութիւնները որպէս հաւասարը հաւասարի չեն կարող յարաբերուել։ Ուստի մեր հասարակութեան եւ պետութեան մակարդակի բարձրացման մասին մտածել եւ գործելն է ճիշդը, թէ չէ մեր անելիքը թողած մեղաւորներ ենք փնտռում շարունակ։ Ու այդ անվերջ գործընթացում դեռ քանի՞ խստովանութիւն կույ կը գնայ անվստահութեանը, մինչեւ ճշմարտութիւնը ջրի երես դուրս կը գայ, որովհետեւ ստախօսների յենարանը տգէտների լսարանն է։ Երբեմն նոյնիսկ ծիծաղելի է լսել տուրք, երբ գիտես ճշմարտութիւնը։ Բայց չես էլ ուզում ընդհատել մարդուն, չէ որ տանջում՝ յօրինում է։ Յետոյ էլ քանի նախանձում ես ուրիշի յաջողութեանը, քո սեփական յաջողութիւնը չես ունենայ։ Յաջողակներին ոչ թէ նախանձում են, այլ նրանցից սովորում են։ Հետեւապէս մեզ ինչ է մնում, ի հարկէ՝ սովորել, բացառելով հները՝ նոր սխալներ թոյլ չտալ, պատմութիւնը սերտել եւ դասեր քաղել անցեալից։ Օրինակել լալին, ուժեղին, հեռատեսին, ուղիղ նայել իրականութեան աչքերին եւ յաղթանակներ կերտել։

Երեւան
18.09.2024

Խմբագրութեան համակարգող՝	Դոկտ. Արշալիր ԿԵՆՏԵԱՆ (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ջըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ ԱՆՏԻՔԵԱՆ	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուօ)
Զաւէն Գրիգորեան	(Աթէնք)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A.	
Website: www.baikarweekly.com	E-mail: baikarweekly@gmail.com
Tel: 1-201-406-9771	Fax: 1-201-661-8722

ԻՍՐԱՅԵԼԻ ԴԵՐԻՆ ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱԽԻ ԱՆԿՄԱՆ ՄԷՋ

Ցատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՑԱՐՈՂՈՒՄԻ ՆԱԿԱՏԱՏՄԱՆ

Ատրպեյճան ինը ամիս պաշարման տակ պահել էր Արցախը, 2023-ի Սեպտեմբեր 19-ին շարունակական յարձակում գործեց զուտ հայկական Լեռնային Ղարաբաղի վրայ, զայն առնելով իր գրաման տակ ու վերջ դնելով անոր անելի քան հազարաւոր տարիներու հայկական գոյութեան եւ երեսուն տարուան անկախութեան: Ատրպեյճանի այս «յադրական» արարքին վրայ կեղծոնացած էր աշխարհի զանազան երկիրներու ուշադրութիւնը, սակայն մասնաշաղկապ կերպով կ'ընդգծուէր Իսրայէլի ներգրաւումը Ատրպեյճանին յառաջացած զենքեր հայթայթելու ու ազդեցիկները հայոց դէմ յարձակման առաջնորդի դեր ստանձնելու հարցերուն մէջ՝ փոխան անվճար քարիւղի եւ կազի, որոնք Իսրայէլի ուժանիւթի պէտքերու մեծ մասը կը գոհացնեն:



Արցախի գրաւումը Ատրպեյճանի կողմէ տեղի կ'ունենար ողջ աշխարհի անտարբեր աչքերուն առջեւ, «Ժողովուրդներու ինքնորոշման ճակատագրի ազատ ընտրութիւն», «մարդու իրաւունքներ», «ազատութիւն եւ ժողովրդավարութիւն» (freedom and democracy) եւ այլ չիրականացուող լոզունգներու անուշաբոյր մշուշին մէջ: Գրաւումն առաջ՝ 2022-ի Դեկտեմբերին, Ատրպեյճան Արցախը Հայաստանի միացնող միակ ճանապարհը՝ Բերձորի, ներկայիս Լաչինի մէջ կը փակէր եւ մօտաւորապէս ինը ամիս շրջափակելով Արցախը, գետին կը պատրաստէր իր գրաւման: Այս ընթացքին Ատրպեյճան ռազմականօրէն գերակշիռ էր Հայաստանէն, որովհետեւ վերջինս պարտութիւն կրած էր 2020-ի պատերազմին:

Հայաստան-Ատրպեյճան հակամարտութեան առաջին օրէն սկսեալ, Իսրայէլ միլիոնաւոր տոլարներ արժողութեամբ զենք վաճառած է Ատրպեյճանին: Յուցակագրութեան մը համաձայն 2015-2019 թուականներուն Ատրպեյճանի զենքերուն 60 առ հարիւրի աղբիւրը Իսրայէլ եղած է՝ ըստ «Պատերազմի եւ Խաղաղութեան Հիմնարկի Տեղեկագրութիւն» հաստատութեան: Իսրայէլի կողմէ Ատրպեյճանի յանձնարած զենքերուն ամէնէն կարեւորներն են անօդաչու սարքերը, հիմնականօրէն լրտեսականներն ու մարտավարականները (tactical): Այս անօդաչու սարքերուն ռազմագիտական կարեւորութեան պատճառով, Ատրպեյճանի պաշտպանութեան նախարարութիւնը սերտ գործակցութիւն հաստատած է իսրայէլեան «Օդանաւորութեան Պաշտպանողական Համակարգ»-ի ընկերութեան հետ եւ այս սարքերը սկսած են Պաքուի մէջ արտադրուիլ:

Բացի ասկէ իսրայէլեան «Էլթա Համակարգեր» ընկերութիւնը Ատրպեյճանի հայթայթած է Արցախի թուայնացած ամբողջական քարտէսները, պատերազմական դիւրութիւններ ընձեռելով եւ Ատրպեյճանը Հայաստանի բաղդատմամբ արհեստագիտական գետնի վրայ վերածելով գերադաս ուժի: Նոյն 2020-ի պատերազմի ընթացքի տեւողութեան իսրայէլեան հարիւր բեռնատար օդանաւեր յարատեւ զինամթերք եւ ռազմական յառաջացած գործիքներ փոխադրած են Իսրայէլէն Պաքու, անցնելով թրքական եւ վրացական օդային սահմաններէն:

Ի՞նչ է Իսրայէլի շահը այս բոլորին մէջ:

Առաջին հերթին ան հակա-իրանեան առաջնակարգ զինուորական եւ լրտեսական խարխիս հաստատած կ'ըլլայ Ատրպեյճանի մէջ՝ Իրանի աշխարհագրական սահմանին վրայ: Թէ՛ Իսրայէլ եւ թէ՛ Ատրպեյճան կը շահին Իրանը սեղմելով: Իսրայէլ շահագրգռուած է Իրանի հիւլէական ոյժի սահմանափակման հարցով, ինչպէս նաեւ իր ահաբեկիչ նկատած թշնամի կազմակերպութիւններուն Իրանի հայթայթած գործնական նեցակցութեան նուազեցման խնդիրով: Իսրայէլ իր ապահովութիւնը առաջնակարգ հարց կը նկատէ եւ Իրանը սեղմելով կը ձգտի իր անվտանգութեան ամրացման:

Երկրորդ է որ Ատրպեյճանի եւ Իրանի ժողովուրդները նոյն իսլամական շիի համայնքին կը պատկանին, սակայն Ատրպեյճան բաւական աշխարհականացած է եւ իսլամ երկիրներու մէջ այն քիչերէն է (թերեւս ալ միակը)՝ որուն ժողովուրդը իսլամ կրօնի պաշտամունքի պարտականութիւնները գրեթէ չի կատարեր: Ատրպեյճանական իշխանութիւնները ունին այն մտավախութիւնը, թէ Իրան իսլամական գործօնը օգտագործելով իր ազդեցութիւնը կը սփռէ Պաքուի վրայ: Անոնք ակամատես եղած են Իրանի ազդեցութեան տակ «Հիւսէյնիյուն» կոչուած զինեալ խմբաւորման գործունէութեան, որ կը ձգտի Ատրպեյճանը դարձնել Իրանի ենթակայ իսլամական պետութիւն մը (Համա-ցանցային Կայքէջ.- <https://iari.site/2023/10/18/beyond-borders-the-israel-azerbaijan-understanding-between-containment-and-cooperation/>):

Բացի վերոյիշեալ ազդակներէ, Իրանի Խորհրդարանի կարգ մը երեսփոխաններ Իրան-Ատրպեյճան սահմանագիծին օրինականութեան շուրջ կասկածներ յայտնած են եւ կ'ըսեն թէ ազերի քաղաքացիներ, մանաւանդ Նախիջեւանի մէջ կը նախընտրեն միանալ իրանեան մայր հայրենիքին ու ձերբազատուիլ Կովկասի մէջ թրքական եւ իսրայէլեան ազդեցութիւններէն:

Իրանի Իսլամական Պետութիւնը Ատրպեյճանի հետ զանազան տարակարծութիւններ ունի, որոնցմէ Ատրպեյճանը Նախիջեւանին (փաստօրէն Թուրքիոյ) միացնելիք «Չանգեզուրի Անցքը», որուն գործադրութիւնը Իրան կը նկատէ իրեն սահմաններու փոփոխութիւն իր եւ Հայաստանի միջեւ, եւ որ Իրան իբր կարեւոր դաշնակից կը սեպէ:

Պաքուի եւ Թէլ Աւիի համագործակցութիւնը կ'ընդգրկէ ելեկտրական լրտեսական կայարաններու հաստատումը Ատրպեյճանի հարաւային սահման-

ներուն մէջ, Իրանը հակակշռի տակ առնելու եւ զայն սեղմելու նպատակով: Աւելին՝ Պաքու Իսրայէլի լրիւ իրաւասութիւն կու տայ հաստատուած այս կայարաններէն Իրանի դէմ գործողութիւններ կատարելու, ինչպէս նաեւ իր օդակայանները Իսրայէլեան ուժերու տրամադրութեան տակ կը դնէ՝ իրանեան հիւլէական կայաններուն վրայ յարձակում գործելու նպատակով:

Ատրպեյճանի եւ Իսրայէլի միջեւ համագործակցութիւնը չի սահմանափակուիլ զինուորական ոլորտով, այլ կ'ընդլայնի ընդգրկելով տնտեսական, գիտական, մշակութային եւ զբօսաշրջիկային ոլորտները:

Իսրայէլի տնտեսութիւնը մեծապէս կախեալ է Ատրպեյճանի քարիւղի ներածումէն: 2021-ին Իսրայէլի հոսմ քարիւղի մատակարարումը Ատրպեյճանին կը հասներ 61 առ հարիւրի, ըստ «Գործողութեան Գնահատման Հսկողութիւն» («Operational Evaluation Command»- O. E. C.) ընկերութեան տուեալներուն:

Իրան լրիւ գիտակից ըլլալով Ատրպեյճանի եւ Վրաստանի մէջ իսրայէլեան ուժերու տեղակայման եղելութեան, վերջերս պաղտախնդան «Համաս» կազմակերպութեան ղեկավար Իսմայիլ Հանիյէի Իսրայէլի կողմէ սպանութենէն քանի մը օր ետք, իբրեւ հաւանական փոխադարձութիւն՝ Ատրպեյճանի եւ Վրաստանի մէջ իսրայէլեան խարխիսները հարուածելու հպանցիկ ակնարկով մը մատնացոյց ըրաւ:

Կովկասի մէջ իր բոլոր գործունէութիւնը արդարացնող պատրուակ մը կը ներկայացնէ Իսրայէլ Թուրքիոյ եւ Ատրպեյճանի: Իբրեւ թէ ան հետամուտ է փան-թուրքիզմի կամ թուրանիզմի գործադրութեան իրականացման: Սակայն Իսրայէլ այս ծրագիրը կը ձգտի իրականացնել ոչ թէ թրքացեղ պետութիւններու ծրագրին համաձայն, այլ ինքնուրոյն յետին նպատակի վրայ հիմնուած շահադիտական եւ ուժի ընդունելութեամբ:

Սակայն եւ այնպէս, ցարդ Ատրպեյճանի ու Վրաստանի մէջ իսրայէլեան ուժերը անհաշիւ մնացին, որովհետեւ Արեւմուտքի կողմէ Իրան աշխարհագրականօրէն եւ զինուորապէս պաշարուած վիճակի մէջ է: Ատրպեյճանի եւ Վրաստանի մէջ իսրայէլեան ուժերու խարխիսներուն դէմ որեւէ իրանեան գործողութիւն հաւանական է որ պիտի հակադարձուի Փաքիստանէն, Իրաքէն, Յորդանանէն կամ Մեծ Բրիտանիայէն: Ըստ հաւանական է որ Իրանի կողմէ որեւէ միջամտութիւն՝ արգիլելու համար Ատրպեյճանի յարձակումը հարաւային Հայաստանի մէջէն անցք ապահովելու փորձի մը դէմ, պիտի հակադարձուի վերոյիշեալ երկիրներու կողմէ: Սոյն պետութիւններու ետին կը կանգնի Իսրայէլի պետութեան արգանդը՝ Անկլո-Սիոնիզմը:



Փաստօրէն Իսրայէլի օգնութիւնը Ատրպեյճանի ոչ միայն Հայկական Արցախի կորուստին առաջնորդեց, այլ նաեւ հազարաւոր հայ երիտասարդներու արիւնը թափելով՝ Իսրայէլ գուարճացաւ իր սեփական շահերը ապահովելով Ատրպեյճանէն: Հայ երիտասարդներու արեան պարտքը կ'իյնայ Իսրայէլի վզին վրայ: Սակայն եւ այնպէս, ինչպէս առաջը կ'ըսեմք՝ Ինչ որ ցանես, զայն կը հնձես»: Այժմ Կազախի եւ Հարաւային Լիբանանի մէջ Իսրայէլ իր ճիւղին պարտքը մասամբ մը կը վճարէ հարիւրաւոր զինուորներու սպանութեամբ եւ բազմահազար վիրաւորներով, բացի նիւթական եւ բարոյական հսկայական վնասներէ, որոնցմէ է անմախքնեցած սարսափը ամբողջ Իսրայէլի: Ամբողջ իսրայէլեան բանակը ահազանգի մէջ է, եւ վերջերս Իրանի սպանալիքով՝ հարուածելու իսրայէլեան ուժերը Վրաստանի եւ Ատրպեյճանի մէջ, կը մղէ Իսրայէլը որ լքօրէն մտածէ իր այդ ուժերը յետ քաշելու մասին: Կազախի եւ Հարաւային Լիբանանի ուժեղ դիմադրութիւնները շոնոյալից ապտակներ են Իսրայէլին: Այս պատճառաւ Իսրայէլ ներկայիս Կովկասի մէջ կը տատանուի Ատրպեյճանի միջոցով որեւէ հակա-հայկական քայլ առնելէ եւ նոյնիսկ կը մտածէ աշխարհի իր ուժերը տուն կանչել, դուրս գալու համար իր նեղի ու սարսափի մատնուած վիճակէն:

Պէյրութ

ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ

104-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

ՄԱՏԱՂԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Հաճնոյ հերոսամարտի մահատակներուն մուկրուած աւանդական մատաղի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 12 Հոկտեմբեր 2024-ին:

Հետեալը, կոչ կ'ուղղենք բոլոր հայրենակիցներուն եւ բարեկամներուն, որ իրենց մատաղցու ոչխարը կամ մուկրատութիւնները փոխանցեն Հաճնոյ Հայրենակցական Միութեան գրասենեակ, Սր. Գեորգ Եկեղեցւոյ խորհրդարանին եւ կամ շրջող հանգանակիչներուն:

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ

75-ԱՄԵԱՅ ՅՈՐԲԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ

Ամենապատիւ եւ Գերերջանիկ Հոգեւոր Տէր
Արհիապատիւ հայրեր
Հոգեւոր եղբայրներ, սրբակրօն քոյրեր եւ սիրելի ներկաներ

Միջերկրական ծովու գեղածիծաղ ափերուն ալիքները քնքշօրէն կ’ողողեն փիւնիկեան քաղաքակրթութեան օրրանը հանդիսացող մայրիներու երկիր Լիբանանի արեւմտեան սահմանները: 225 քմ. հիւսիսէն հարաւ ձգուող այս ափին անուանի եղած են պատմական շատ մը քաղաքներ, որոնց շարքին առափնեայ գիծին կեդրոնը՝ դէպի Միջերկրական ծոց բացած թերակղզիի մը վրայ կը տա-րածուի Պէյրութ մայրաքաղաքը, որ հազարամեակներէ ի վեր եղած է բազմաթիւ մշակոյթներու, լեզուներու եւ ժողովուրդներու սիրտը: Արդարեւ, կենդանի խճանկարի նման, ուր միահիւսուած են բազմազգ համայնքներու եւ կրօններու գոյ-ները, Պէյրութ միշտ եղած է խաղաղ համակեցութեան, հանդուրժողականու-թեան ու տարբեր ազգերու, մշակոյթներու եւ դաւանանքներու պատկանող մար-դիկը միաւորող ջերմ հիւրընկալութեան փայլուն խորհրդանիշ մը:

Ահաւասիկ այսպիսի բազմազգի համայնքային, մշակութային եւ կրօնական միջավայրի մը երկնակամարին վրայ 1947 թուականի յունուարին ծնունդ կ’առ-նէ նոր աստղ մը, որ հայաշխարհին կը յայտնէ իր հոգեւոր-բարոյական, գրա-կան-մշակութային, ազգային եւ կրօնական ինքնութիւնը «Մասիս» նուիրական անունով: Ան արդէն թեւակոխած է անխոց նուիրումի եւ արգասաբեր առաքե-լութեան պատկառելի տարիք մը, եւ այժմ՝ 75 տարի անց, ան կը փայլի աւելի քան երբեւէ՝ սփռելով իր լուսեղէն ճառագայթները մինչեւ հեռաւոր ապագայի հորիզոնները: Արդարեւ, «Մասիս» վաստակաշատ յոբելեար մըն է եւ իր շուրջ-բոլորը իրաւացիօրէն յարգանք կը պարտադրէ նշելու համար այս կարեւոր իրադարձութիւնը:

Երբ յոբելեան մը կը նշենք, հոգեւին կը գնահատենք կարեւոր դէպք մը կամ կը տօնախմբենք սիրելի անձի մը տարեդարձը, որոնք զգալի ներդրում եւ նշա-նակութիւն ունեցած են մեր կեանքին մէջ: Փաստօրէն ան յիշատակի տօն մըն է, անձնական կամ հաւաքական երախտագիտութեան անկեղծ զգացումներու դրսեւորում մը ոչ միայն այն բարիքներուն համար, որ յոբելեարը շնորհած է մե-զի, այլ միաժամանակ գնահատել կարենալու համար այդ առիթին ընձեռած կարեւորութիւնը անցեալին, ներկային, բայց մասնաւորաբար ապագային հե-ռանկարով:

«Մասիս» իր գոյառումը կը պարտի Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեան ծի-րանաւոր կաթողիկոս-պատրիարքի նախածննդութեան, որ արդէն 1946 թուա-կանի վերջերը «Թուղ» շրջաբերականով՝ մը հայ կաթողիկէ բոլոր թեմակալ առաջնորդներուն, ուխտերուն, միաբանութիւններուն, հաստատութիւններուն, կղերին եւ ժողովուրդին կը յայտնէ, թէ «Յառաջիկայ 1 յունուարին հայ կաթողի-կէ հասարակութիւնը իր շաքաթաթերքը պիտի ունենայ «Մասիս» անունով»: Այս մեծանուն հայը եւ Ընդհանրական կաթողիկէ եկեղեցւոյ հայազգի կարտինալը քաջ կը գիտակցի նման շաքաթաթերք մը ստեղծելու կենսական կարիքին՝ իր խնամքին յանձնուած հայ կաթողիկէ հօտին համար: Թէպէտ վաղուց արդէն գոյութիւն ունէր հայ կաթողիկէ պատկառելի մամուլ մը՝ «Բազմավէպ», «Եւրո-պա», «Հանդէս ամսօրեայ», «Կաթողիկէ արձագանգ», «Ուսումնարան», «Աւե-տիք» եւ «Մխիթարեան ընտանիք» անուններով, սակայն եւ այնպէս կը պակսէր շաքաթաթերք մը, որ ուղղուած պիտի ըլլար լրացնելու բոլորովին ուրիշ բաց մը: Ահաւասիկ այս փաստին կ’անդրադառնայ 1 յունուար 1947 թուականին «Մա-սիս»-ի անդրանիկ թիւին մէջ լոյս տեսած խմբագրականը.

«Այս տարի՝ Պէյրութահայ մամուլի համեմատաբար բազմաթիւ հրատարա-կութիւններու շարքին մէջ՝ նոր թերթ մըն է որ կ’երեւի ճիշդ կաղանդի առթիւ. ՄԱՍԻՍ: Ի՞նչ է ատոր նորութիւնը. նա կու գայ կարեւոր պէտք մը հոգալու, գո-ցելու զգալի բաց մը: Հայ կաթողիկէ համայնքը չունէ իր թերթը, որ խօսէր իրեն յատկապէս, որ բերէր ուղղակի իրեն՝ զինքը շահագրգռող լուրեր, ստոյգ, ճշգրիտ, վստահելի տեղեկութիւններ այն ամէն բանի շուրջ, որ պիտի ուզէր գիտնալ ատենին, տեղն ի տեղով, որ հաղորդակցութեան դնէր ոչ միայն իր ազգին, իր հայրենիքին, իր ալ սփիւռքի, այլ նաեւ աշխարհաստարած կրօնակիցներու հետ, տար՝ ազգայինէն, քաղաքականէն գտտ՝ կաթողիկէ աշխարհէ ալ լուրեր»:

Սոյն յայտարարութիւնը յստակ ու մեկին կը դարձնէ այն փաստը, որ առկան փառատենչութեան եւ ոչ իսկ մտաւորական թռիչքի մը յագուրդ տալու ցանկու-թիւն ունի, այլ առաջնահերթ կը համարէ լրատութեան եւ արագ հաղորդակցու-թեան միջոցներով ծառայելու համայնքային կարիքներուն, որոնք ցարդ թերի կը մնային:

«Մասիս» շաքաթաթերքի գոյառման առնչութեամբ նոյնքան խորիմաստ է այն կարգախօսը, որ ծիրանաւոր հայրապետը իբրեւ մեկնարկ կու տայ նորա-ծին թերթին՝ «Որպէս զէն՝ ճշմարտութիւն»: Ի՞նչ կը բնորոշէ այս կարգախօսը կամ ինչպիսի՞ պատգամ մը կ’ուզէ հաղորդել թերթին խոհուն հիմնադիրը ճշմարտութիւնը իբրեւ զէնք ունենալ նշանաբանով:

Մեծանուն հայրապետը ստոյգ ներշնչուած է Աստուածաշունչ մատեանի Մաղմոսաց գիրքէն եւ իր մտասեւեռումներուն միւթ դարձուցած է անոր Դ. (90-րդ) սաղմոսին 5-րդ համարը, որ Դաւիթ մարգարէն գովաբանական սրտաբովս օրհներգով Տիրոջ կը դիմէ ու կ’ըսէ.

«Որպէս զէն՝ շուրջ եղիցին զքեւ ճշմարտութիւն նորա» (Մղ. Դ, 5):
Մակերեսային ընալում մը ենթադրել պիտի տայ, թէ կարգախօսին «զէն» եւ «ճշմարտութիւն» բառակապակցութիւնները ակրեսիւ կամ յարձակողական, գուցէ որոշակի իմաստով չափազանցուած, նոյնիսկ թշնամական բնոյթ մը ու-նին, որ ի հարկէ միանգամայն հեռու է երջանկայիշատակ ծիրանաւորին դիտա-ւորութենէն:

Արդարեւ, Դ. սաղմոսը Տիրոջ պաշտպանութեան ու խնամքին հանդէպ ամ-բողջական վստահութեան հզօր խոստովանութիւն մըն է: Մաղմոսերգուն կը շեշտէ, որ Աստուծոյ հանդէպ հաւատքով ապրողները Անոր պաշտպանութեան տակ են, հետեւաբար պաշտպանուած են մարմինն ու հոգին խոցող, նոյնիսկ կեանքը խորտակող վտանգներէն: Ան զԱստուած կը նկարագրէ որպէս ապաս-տան եւ ամրոց, որ կը պաշտպանէ Իր հաւատացեալները բոլոր տեսակի չարիք-ներէն, ըլլան անոնք հիւանդութիւն, պատերազմներ թէ այլ սպառնալիքներ: Մաղմոսը կը հաղորդէ այն հոգեւոր պատգամը, որ Աստուծոյ պաշտպանութիւնը կ’ընդգրկէ ամէն ինչ, եւ որ Տիրոջ հանդէպ վստահութիւնը ապահովութիւն եւ խաղաղութիւն կը պարգեւէ, թէկուզ դժնդակ նեղութիւններու ժամանակ:

Ս. Մեսրոպ Մաշտոց եւ իր թարգմանիչ վարդապետները Հին կտակարանի Մաղմոսաց գիրքի Եօթանասնիցի յունարէն թարգմանութեան համապատաս-խան արտայայտութիւնը՝ «Որպէս զէն՝ շուրջ եղիցին զքեւ ճշմարտութիւն նորա»,

Դոկտ. ԱՐԷԼ ԹՀՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ոսկեղենիկ գրաբար հայերէնի բառացիօրէն ճիշդ փոխադրած են: Ի հարկէ, այստեղ խնդրոյ առարկան «զէն» կամ անոր յոգնակին՝ «զէնք» բառն է, որ այսօր միակողմանի իմաստ մը առնելով իբրեւ մահաբեր գործիք կը հասկցուի: Մինչդեռ մեր թարգմանիչ հայրերը «զէն» բառով միաժամանակ այլ հոմանիշ մը՝ պաշտպանութեան «վահան» հասկացութիւնը ընկալած են: Հետեւաբար աւելի ժամանակակից թարգմանութիւններ այս սաղմոսը այսպէս վերարտադրած են.

«Անոր ճշմարտութիւնը քու ասպարը [գրահանդերձը] ու վահանը պիտի ըլլայ»:
Սակայն ի՞նչ է ճշմարտութիւնը ծիրանաւոր հայրապետին համար բովանդա-կային այս կառոյցին մէջ: Իմաստասիրական մանուածապատ հասկացութիւն-ներու համակա՞րգ մը, թէ՞ պարզ ըմբռնում մը, որ ճշմարտութիւն բառին դիմաց կը կարդանք իւրաքանչիւր բառարանի մէջ.

«Խօսքին կամ արտայայտութեան համապատասխանութիւնը այն նիւթին կամ իրականութեան հետ, որուն մասին ան եղած է»:

Քաջանուն աստուածաբան հայրապետին համար նման ընկալում մը խիստ սահմանափակ է: Անոր տրամախոհութիւնը կը հայի կրօնական խորապատ-կերներուն, ճշմարտութեան ընկալման աստուածային ոլորտին: Կրօնական ըմբռնումին մէջ ճշմարտութիւնը յաճախ կը դիտուի իբրեւ աստուածային իրա-կանութիւն կամ այն, որ համահունչ է Աստուծոյ կամքին եւ էութեան: Ան ան-փոփոխ է, բացարձակ, եւ կը գերազանցէ մարդկային ճանաչողութեան սահ-մանը: Շատ մը կրօններ ճշմարտութիւնը կ’ընկալեն իբրեւ աստուածային էու-թեան արտայայտութիւն, որ կը բացայայտուի աստուածային յայտնութիւննե-րու, սուրբ գրութիւններու եւ բարոյական սկզբունքներու մէջ: Դշմարտութիւնը կը ծառայէ իբրեւ բարիի եւ սրբութեան ուղեցոյց եւ էապէս կը հակադրուի կեղծիքին ու խաբէութեան: Յամենայնդէպս, քրիստոնեաներուն համար ճշմարտութիւնը «ի՞նչ» մը չէ, այլ «ո՞վ» է: Ո՞վ է ճշմարտութիւնը. Ան, «Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով» (Նիկիական Հան-գանակ), եւ ըսաւ. «Եւ եմ ճանապարհն, ճշմարտութիւն եւ կեանք» (Յով. ԺԴ, 6):

Վերոգրեալ ըսինք՝ «Մասիս» հայութեան համար նուիրական անուն մըն է, որ երանաշնորհ Աղաճանեան հայրապետը ստոյգ ինք ընտրած է եւ զայն իբրեւ ինքնութեան ձօնած է հայ կաթողիկէ նորածին շաքաթաթերթին: Պէտք է նկատի ունենալ, որ ծիրանաւոր հայրապետը իր ծագումով սփիւռքահայ մը չէ, այլ ծնունդով հայրենի հողէն կու գայ: Ան իր էութեան մէջ կը կրէ ոչ միայն հայոց պատմութեան, այլեւ իր հայրենի ծննդավայրին կնիքը, որ Մեծ Հայքի Գուգարք նահանգի պատմական Ջաւախք գաւառի Ախալցխա քաղաքն է: Արդ, եթէ դառն ճակատագրի բերումով մենք՝ սփիւռքահայ դարձածներս, մեր հոգիին բոլոր թելերով ու զգացումներով կապուած կը զգանք հայ ժողովուրդի գոյութեան գե-րազանց խորհրդանիշ՝ եւ հայոց պատմութեան մեծագոյն վկայ Մասիսին, ապա ան որքա՞ն էական ներկայութիւն մը պէտք է հանդիսանայ այն եկեղեցական բարձրաստիճան գործիչին կեանքին ու գործին համար, որ ուղղակի հայկական լեռնաշխարհէն կը սերի եւ որուն բարձրագոյն գագաթը մարդկային ցեղի օրրան աստուածաշնչական Արարատը կամ հայկական Մասիս սարը կը կազմէ:

Ասոր մեկնաբանութիւնը լաւագոյնս կը բացատրէ «Մասիս»-ի անդրանիկ թիւին խմբագրականը.

«Նա սակայն կու գայ հնագոյն անուամբ մը, անուամբը լերան մը, որ աւելի երկինքի զուգահաղորդ է՝ քան երկրի 'խանձարոյք համագոյից սեռի' (Ալիշան):

Վասնզի ըլլայ նա ուրարտական կոչումով Արարատ, ըլլայ արարչութեան թատերաբեմը առաջին, ըլլայ նախիջեանը վերապրած մարդկութեան, է եւ պի-տի մնայ յաւէտ յուշարձանը մեր բնագաւառին, որ Հայաստան կը կոչուի, որու ձեռին ալ ըլլայ՝ «Հայոց Մեծաց» արձան է նա աստուածակառոյց:

[...] Մասիս անունը հետեւաբար ամանորի ատեսաբեր մըն է, Ծննդեան ութօրէքի խաղաղութեան նշանաբան մը, ալեկոծ աշխարհի աղանձի մը Նոյեան Տապա-նի, որ հոն հանգչած կ’ըսուի հիմէն եւ նորէն բաներ մը հայրենիքի:

Այդ անունը կը խտացնէ իր մէջ ինչ որ վսեմ է կրօնական եւ ազգային տեսա-կէտով, ջրահեղձ աշխարհի նախօթեանը, ուր մնացորդը մարդկութեան վերա-ծնունդ գտաւ, վիճահասակ 'կէտ կոթող' մահացուներու եւ անմահներու, որ եղաւ աստուածադիր սահմանը Հայկազն Տան:

Ահա այդ անուամբ՝ հայ կաթողիկէ համայնքը կ’ուզէ արձանացնել միաձոյլ կրօնք եւ հայրենիք, աստուածսիրութիւն եւ ազգասիրութիւն: Ձիրար ամբողջացնող կէսեր են ասոնք, երկու սարերն են Մասեաց. կրօնք պիտի ըսէինք աւագ Մասի-սը, հայրենիք՝ փոքր Մասիսը: Երկու սարերու յօդակապը նոյն սէրն է, որ Հայ-կազն կ’ընէ աստուածսիրութիւնը, որ կ’առնիքնացնէ հայրենասիրութիւնը:

Մեր համայնքը չի կրնար բաժնել ու բաժնուած տեսնել Աստուած՝ հայրենի-քէն, կրօնքը՝ ազգէն. առանց աւագ Մասիսին փոքրը լոկ մահաբձան մը պիտի ըլլար հայոց, առանց փոքր Մասիսին՝ աւագը սառնեղէն բազին մը պիտի մնար»:

Առանց նսեմացնելու նորածնագ շաքաթաթերթի առաջին խմբագիր Յարու-թիւն վրդ. Թէքէեանի գրական կարողութիւնները, հակած պիտի ըլլայի փորձուե-լու՝ ենթադրելով, որ վերոգրեալ հոգեցունց խօսքերը հոսած են նոյնիսկ ծրանա-ւոր հայրապետին գրչէն կամ առնուազն անոնք շիք առ շիք գեղած են անոր հա-մակ հայրենասիրութիւն տրոփող սրտէն:

«Մասիս»-ի առաջին խմբագրականը, որուն կ’անդրադառնանք, ընդսմին անթաքոյց կը յայտնէ իր առաքելութեան ուղին.

«Այսպէս հայ-կաթողիկէ Մասիսը իր տեսութիւններու, տեղեկութիւններու, ու-սումնասիրութիւններու մէջ պիտի դնէ գրականին, պատմականին, բանասիրա-կանին, գիտականի կողքին՝ կրօնականն ու բարոյագիտականն ալ. իրաւագի-տականի կողքին՝ ընկերաբանականն ալ. օգտակարի կողքին՝ հաճոյականն ալ պիտի չամտեսէ. եւ այդ ամենուն մէջ պիտի դնէ յատկապէս շունչ մը կաթողի-կէութեան, այսինքն ճշմարտութեան եւ արդարութեան»:

Ուշագրաւ է, որ «Մասիս» իր առաջին թիւին ճակատը կը զարդարէ Արա-րատեան դաշտավայրէն առնուած մեծ ու փոքր Մասիսներուն սպիտակափառ եւ արեգնաճեմ գագաթներուն լուսանկարով, որուն տակ կը տեղադրէ Աւետիք Իսահակեանի Արարատին ձօնուած «Ռավեննայում» բանաստեղծութիւնը: Այս քերթուածին մէջ արեւելահայ գրականութեան մեծագոյն բանաստեղծներէն Իսահակեան կը ներկայացնէ հայ ժողովուրդին յաւերժութիւնը եւ Արարատը՝ իբրեւ այդ յաւերժութեան կրանիթեայ խորհրդանիշը.

ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

ՏԽՈՒՐ ԷԶ ՄԸ ՀԱՅՈՑ ՈՐԲԱՊԱՏՈՒՄԷՆ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Հայոց ցեղասպանության հետևանքով որբացած սերունդի մը անողոր ճակատագիրը, առ այսօր, կը յուզէ ընթերցողները: Սրտառուչ էջերու եւ յուզաթաթաւ դրուագներու անաւարտ պատմութիւններ են անոնք: Իւրաքանչիւր որբինը՝ իրեն առանձնայատուկ ողիսականով: Երկաւոր է պատմութիւնը հայոց որբապատումին:

Ռումանիոյ Ստրունգա գիւղին մէջ գործած է հայկական որբանոց մը, որ թէպէտ կարճատեւ կեանք է ունեցած, սակայն իր դրոշմը ձգած է ռումանահայոց յիշողութեան մէջ: Այդ որբանոցին հիմնադրութեան հանգամանքներուն, երեք տարուան դժուարութիւններուն, որբերուն վիճակուած պայմաններուն, որբերու տուեալներուն եւ անոնց հետագայ կեանքին մասին երախտարժան ուսումնասիրութիւն մը կատարած է Արսէն Արզումանեան, որուն խորագիրն է՝ «Ստրունգայի Հայկական Որբանոցը» իսկ ենթախորագիրն է՝ «Բեկումած ճակատագրերի վկայութիւններ»: Գիրքը լոյս տեսած է 2023-ին, Պոլսարեստ, «Արարատ» հրատարակչութեան կողմէ, Ռումանիոյ Հայոց Միութեան աջակցութեամբ: Հատորը կը բաղկանայ 221 էջերէ:



Հեղինակը՝ Արսէն Արզումանեան Նախաբանին մէջ կը գրէ՝ «Ստրունգա գիւղը՝ երիզուած սաղաքախիտ անտառներով ու մաքրամաքուր աղբիւրներով, ռումինահայ համայնքում խոր յուզական ապրումներ է ապրնացնում»: Ստրունգան կը գտնուի Ռումանիոյ Եաշ մարզի Տրբու Ֆրումա քաղաքի հարեւանութեամբ: Ան նշելով որ մենագրութիւնը գրուած է հայկական որբանոցին հիմնադրման 100 ամեակին առթիւ, կ'եզրակացնէ՝ «այս աշխատութիւնը նուիրում է որբանոցում ապրած երեխաների եւ դրա կայացման մէջ դեր ունեցած բոլոր հայրենամուտէր մարդկանց յիշատակին»:

Սոյն աշխատութիւնը ունի եօթ գլուխներ. յագեցած է արխիւային լուսանկարներով, հազուագիւտ պատկերներով, մամուլի կտրօններով, թերթերու լուսապատճեններով, որբերու անձնական թերթիկներով, քարտէզով. հեղինակը լայնօրէն օգտագործած է օրուան եւ ընդհանրապէս ռումանահայ մամուլը («Փարոս», «Մասիս», «Նոր Արշալոյս», «Երկիր», «Հայ Մամուլ», ռումաներէն «Ararat», «Արարատ», «Արագ»), պրպտած անձնական թէ հանրային արխիւներ (Եաշի ազգային արխիւ, Ռումանիոյ ազգային գրադարան, Ռումանիոյ հայ եկեղեցւոյ առաջնորդարան), նիւթին վերաբերեալ գիրքեր եւ աղբիւրներ (հայերէն եւ ռումաներէն), ունեցած շահեկան հարցազոյցներ:

Առաջին գլուխը՝ «Պոլսում Գտնուող Հազարաւոր Հայ Որբերի Խնդիրը» (էջ 9-18) կը վերաբերի որբանոցին հիմնադրութեան հանգամանքներուն: 1922-ին, Պոլիս հաւաքուած էին շուրջ 120 հազար որբեր՝ տարբեր գաւառներէ փրկուած: Օրուան ազգային-հոգեւորական ղեկավարութեան հիմնախնդիրն էր այս ծանր լուծին խելամիտ լուծումը: Անոնք օգնութեան կը դիմէն բազմաթիւ հայագաղութներու՝ թերեւցնելու այս բեռը՝ որբերը իրենց մօտ ընդունելով: Այդ գաղութներէն էր ռումանահայութիւնը: Պոլսէն պատուիրակութիւն մը կը ժամանէ Ռումանիոյ տարբեր քաղաքներ՝ հարցին գործնական լուծման համար: Պատուիրակութիւնը, որ կը գլխաւորէր Գնէլ Արք. Գալէմբէրեան, կ'այցելէ հայաշատ Պոլսարեստ, Կոստանցա, Եաշ, Ռոման քաղաքները: Առաջարկը ջերմ ընդունութեան կ'արժանանայ ոչ միայն հայ, այլեւ ռումանցի հոգեւոր եւ քաղաքային գործիչներու կողմէ եւ Եաշի մէջ այս նպատակով կը կազմուի պատկառելի մարմին մը՝ ռումանացիներու իսկ մասնակցութեամբ: Գաղութէն ներս կը ստեղծուի մեծ ոգէտրութիւն՝ ձեռք մեկնելու որբացած սերունդին: Տեղական մամուլը եւս կ'անդրադառնայ սոյն իրադարձութեան: Այս առթիւ, Պոլսարեստի մէջ կը ստեղծուի Որբախնամ Մարմինը, որուն ղեկավարը կը դառնայ համայնքի կարկառուն ներկայացուցիչ, գործարար Արմենակ Մանիսալեանը: Անոր անձնոր ծառայութիւնը մեծապէս նպաստեց այս գործին յաջողութեան: Ան միշտ մնաց որբանոցի թիկունքին: Պոլսոյ պատրիարքարանը 100 որբեր ընդունելու խնդրանքով կը դիմէ ռումանական կառավարութեան. որուն ի պատասխան՝ Եօն Պրընտիանուի կառավարութիւնը, բարեացակամ քայլով մը, կը համաձայնի ընդունիլ 200 որբեր՝ անձնակազմով միասին: 18 Նոյեմբեր 1922-ի որոշումով, Ռումանիոյ ներքին գործոց նախարարութիւնը հաւանութեան կ'արժանացնէ անոնց մուտքը Ռումանիա: 200 տեղանոց որբանոցի վայրին բարդ խնդիրը կը լուծուի երկարատեւ փնտռութիւնէր ետք՝ երբ կ'որոշուի զայն հաստատել Ստրունգա գիւղին մէջ գտնուող հայ փաստաբան Ռուպեր Սուրատի (Միլլի) ամառնային հիւրանոցին մէջ: Որբանոցին համար պէտք էին յարմարաւէտ ննջասենեակներ, դասարաններ, խոհանոց, արհեստանոցներ, խաղավայր: Կը մնար երեխաներուն Պոլիսէն փոխադրութեան հարցը: Հոն կը կարդանք՝ «որբանոցի հիմնումը դառնում է ռումինահայ համայնքի կեանքում կարեւորագոյն իրադարձութիւն: Իրենց հայրենակիցներին օգնելու այս նախաձեռնութիւնն գլուխադէպ էր համայնքի ողջ պատմութեան մէջ»:

Երկրորդ գլուխը վերնագրուած է «Ստրունգայի Հայկական Որբանոցի Հիմնումը» (էջ 19-24): Հոն կը նկատենք որ օրուան մամուլն ու անոր խմբագիրներն ու թղթակիցները մեծ հետաքրքրութիւն ցուցաբերած են որբանոցին հանդէպ եւ երբեմն ունեցած տարակարծութիւններ, նկարագրած անոր ներքին կեանքն ու անդրադարձած անոր առաքելութեան: Ծանօթ գործիչ Պարոյր Լեւտեան (աշուղ Ջիւանիի որդին) կը խմբագրէր «Նոր Արշալոյս»ը, Վարդան Մետառեան՝ ռումաներէն «Արարատ»ը, ծանօթ հայագետ Հայր Սկրտիչ Պոտուրեան՝ «Երկիր»ը: Մինչայդ, Ռումանիոյ տարբեր քաղաքներուն մէջ կը հիմնուին յանձնախումբեր՝ որբանոցին սատարելու նպատակով: Շուտով կը վարձակալեն որբանոցին տարածքը: Որբախնամ Մարմինն քարտուղար Խաչատուր Ոստանիկեան կ'ուղղուի Պոլիս որբերը Ռումանիա փոխադրելու համար: Որբերու նաւը Կ. Պոլսէն կը մեկնի Կոստանցա՝ ժովափնայ քաղաքը, որուն նաւահանգիստը կը ժամանէ 12 Ապրիլ 1923-ին: Քաղաքին հայերը ջերմօրէն կը դիմաւորեն իրենց փոքրիկ ազգակիցները: Մինչեւ որբանոցին վերջնական պատրաստութիւնը, որբերը կը մնան Պոլսարեստի եւ Կոստանցայի հայ ընտանիքներու մօտ:

ԱՌԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

Երրորդ գլուխը խորագրուած է՝ «Երեխաների Նոր Կեանքը» (էջ 27-48): Որբերը Ստրունգա կը ժամանեն 21 Ապրիլին, որուն մասին կը կարդանք՝ «որբերի ժամանումը Ստրունգա մեծ իրարանցում էր առաջացրել տեղի բնակիչների մօտ, որոնք երեխաների համար այնպիսի դիմադրում կազմակերպեցին, որ մինչեւ արտասուք շարժեցին որբերի եւ նրանց ուսուցիչների սրտերը»: Շատեր հիւանդոտ էին, որոնց կը տրուի յատուկ խնամք: Բարդութիւն մըն ալ երեխաներուն տարիքին հարցն էր, որոնք 8-16 տարեկան էին՝ իրարու անհամապատասխան՝ կրթական աստիճանի իմաստով: 150-ը մանչ էին, 50-ը՝ աղջիկ: Երեխաներուն մեծ մասը անտառածանաչ էր եւ կրթութենէ բոլորովին զուրկ: Որբանոցին բացման պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ 28 Օգոստոսին, որուն ներկայ էր ռումանահայ համայնքին ողջ վերնախաւը: Որբանոցին տնօրէնն էր՝ ծանօթ մտաւորական Սարգիս Սրենց, որ ընտանիքով մխրճուած էր այս գործին: Որբանոցը ունէր բժիշկ, խոհարարական անձնակազմ: Ուսուցիչներէն յիշենք՝ Պօղոս Տէր-Պօղոսեան, Հմայեակ Սափրիչեան, տիկ. Արապեան, օր. Սրենց, պոլսահայ բանաստեղծ, մանկավարժ Զարեհ Պլպուլ Պարոնեան (հայրը երջակայիշատակ Զարեհ Ծ. Վրդ. Պարոնեանի), երգիծաբան եւ հրապարակախօս Լեւոն Շաթրեան, Նշան Մազանեան (աւելի ուշ դարձաւ տնօրէն), Ալ. Կիւլպէնկեան, Զարուի Մազանեան եւ ուրիշներ: Կը գործեն կօշկակարութեան, ատաղձագործութեան, գորգագործութեան, ասեղնագործութեան արհեստանոցներ: Երեխաները կը զարգացնեն գիւղատնտեսական հմտութիւններ՝ քանի որբանոցը ունէր հողատարածք եւ բնութեան լաւ պայմաններ: Գորգագործութեան զարգացման կը նպաստէ անուանի գորգագործ Սիրակ Գըսգանեան, որ հետագային պիտի դառնար որբանոցին փոխտնօրէնը: Նոյնիսկ իրենց սարքած գորգերը կը վաճառէն՝ եկամուտ ապահովելով որբանոցին: Որբերը կը ստեղծեն «իրշէջ խումբ»: Կ'ունենան մարզական միջոցառումներ: Կը սկսի նաեւ սկստական շարժումը: Որբերու հարազատներ կամ մայրեր, շնորհակալական նամակներ կ'ուղարկեն տնօրէնութեան:

Չորրորդ գլուխը՝ «Մէկ Տարի Անց» (էջ 49-72), ձեւով մը հաշուետուութիւնն է որբանոցին միամեայ գործունէութեան: Կը կազմուի նոր կեդրոնական վարչութիւն մը, Ռումանիոյ մէջ կը գործեն 18 մասնաճիւղեր՝ որբանոցին օժանդակող: Կը մշակուի անոր կանոնադրութիւնը: Զգալիօրէն տեսանելի է անոր յառաջդիմութիւնը՝ կրթական եւ կազմակերպչական առումներով: Տեղի կ'ունենայ պաշտօնական հանդիսութիւն՝ երգչախումբի մասնակցութեամբ: Կազմուած է «Արարատ» ֆուքայի խումբը, կը հրատարակուի «Ararat» թերթը: Կը բազմաման մուխրատուութիւնները: Կան ձեռքբերումներ եւ մարտահրաւերներ: Հոն կը դասաւանդուին հայերէն, ռումաներէն, գիտութիւն, բարոյագիտութիւն, թուաբանութիւն, կրօն, երաժշտութիւն, ֆրանսերէն, պատմութիւն, աշխարհագրութիւն, գեղագրութիւն, դերձակութիւն եւ այլն: Գոհացուցիչ է նաեւ առողջապահական վիճակը: Յաջորդ գլուխը խորագրուած է՝ «Որբանոցի Ապագայի Շուրջ Տարածայնութիւնները Ռումինահայ Համայնքում» (էջ 73-90), ուր կը կարդանք հակասական կարծիքներ որբանոցին շուրջ, քանի տնտեսական դժուարութիւններու պատճառով պարտքերը կը կուտակուէին: Հետզհետէ կը նուազի թիւը որբերուն, որովհետեւ շատեր կը գտնեն իրենց հարազատները եւ կը հեռանան Ռումանիայէն՝ ինչպէս Պոլիս, Ֆրանսա, Արժանքին, Պրագիլ, ԱՄՆ: Բազմաթիւ ռումանահայ ընտանիքներ սիրալոծար կ'որդեգրեն որբեր, որոնք կը տարտղնրւին տարբեր քաղաքներ՝ Պոլսարեստ, Գալաց, Կեռլա, Կոստանցա, Եաշ, Պազարճիք, Պակլու, Կրայովա, Սիլիստրա եւ այլն: Իրենց հերթին ուսուցիչներ եւս կը հեռանան: Կը մնան մի քանի երեխաներ եւ վերջապէս 1926-ին իր դռները կը փակէ զուրի այս ինքնատիպ հաստատութիւնը: Մինչայդ, շատեր կազմած էին հայեցի ընտանիքներ եւ գծած իրենց ապագան: Հ. Մ. Պոտուրեան կը նշէ՝ ուրիշ հաստատութիւններ փակելը տխուր է, իսկ որբանոց փակելը՝ փառք:

Վերջին գլուխները՝ «Որբանոցը Փակում է Դռները. Երեխաների Նոր Հասցէները» (էջ 91-130) եւ «Որբանոցի Թողած Հետքերով Մինչեւ Հայկական Մատու» (էջ 131-143) կը պատմեն որբանոցէն անցած բազմաթիւ նշանաւոր դէմքերու, գործիչներու մասին: Շատերու հետքերը կորսուած են բնականաբար: Կ'արժէ յիշատակել անուանի նկարիչ, քանդակագործ Արամիկի անունը (Արամ Դարիպեան), որուն կուտակուէին մին Վազգէն Վեհափառ իր հետ կը տանի Սը. Էջմիածին՝ զարդարելու իր գրասենեակը. գործիչ, խմբագիր Վահէ Պահատուրեան, Հայրապետ Բոստանճեան, Աղամշեաններ, որոնց շառաիդները, ԱՄՆ տեղափոխուած, Հայաստանի մէջ կ'իրականացնեն բարեգործական ծրագիրներ, ինչպէս Եղեգնաձորի Վահագն Ազամիշեան ակնաբուժական կեդրոնը: Պատմաբան Արտաշէս Գրեհեան (Նիւ Եորք) եւ ուրիշներ:

Ստրունգայի որբանոցի մասին կը հանդիպինք նաեւ գրականութեան մէջ՝ ինչպէս հանրայայտ գրող Վարուժան Ոսկանեանի «Շշուկների Մատեան»-ին: 2006-ին այս որբանոցի մասին կը պատրաստուի նաեւ հետաքրքրական փաստավաւերագրական ժապաւէն մը՝ փաստերով, յուշերով, վկայութիւններով յագեցած: 2023-ին, որբանոցի հիմնադրութեան 100 ամեակին առթիւ կը կազմակերպուին հանդիսութիւններ Եաշի եւ Ստրունգայի մէջ: Կը հաստատուի յուշակոթող Ստրունգայի հայ որբերուն մուխրուած (քանդակագործ Բոզտան Յովհաննիսեան - Վանաձոր): Կ'իմանանք նաեւ, որ որբանոցին մօտ գտնուած է դամբարան-մատուտ մը: Հոն մեծ կալուածատէր եղած է Ինճէ Յակոբ (խարբերոցի), որ հիմնած է թիւքիմի աշխատանոց եւ ապա առողջարար բաղնիքներ: Ինք եւ իր որդիները թաղուած են հոն: Կը տեսնենք, որ որբանոցին բացման ներկայ եղած են մեծ երգիծաբան Երուանդ Օտեան եւ կարկառուն պատմաբան Յակոբ Սիրունի: Ցաւ ի սիրտ, որբանոցին, մատուռին ու դամբարանին հետքերը գրեթէ չքացած են այսօր, սակայն՝ բարեբախտաբար կան հազուագիւտ լուսանկարներ, որոնք կը պատմեն այդ յուզումնալից եւ ողբերգական պատմութեան մասին: Յատու էջ մը հայոց որբապատումէն...:

Հատորին 149-216 էջերը անուն առ անուն կը ներկայացնեն որբ-որբուհիներու անձնական թերթիկները, որոնց վրայ գրուած են անոնց տուեալները՝ լուսանկարներով հանդերձ: Իսկ էջ 145-146-ի վրայ կը կարդանք բանաստեղծ Զարեհ Պլպուլի սրտառուչ բանաստեղծութիւնը Ստրունգայի որբերուն մուխրուած, որ կը սկսի այսպէս՝

Գիւղի մը մէջ, մօր մը զուրթին չափ խորունկ
Անտառի մը ստուերին տակ լայն ու թաւ,
Կը բարձրանար որբանոց մը նորատունկ՝
Անտառին մօտ նստուած անտառ մը հայ ցաւ:

Հետաքրքրաշարժ եւ շահեկան մենագրութիւն մըն է հատորը, անտարակոյս:

Երեւան

ՄԵԾԱԳՈՅՆ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ԹԵՔԵՆԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐԱՐԶՈՒՄ ՊԵՐՊԵՐԵԱՆՆԻՆ ՀԵՏ

Տղա՛ք, երաժշտությունը կեանք կը փրկէ, սոլֆեճիոն անոր Ա,Բ,Գիմն է,- Պրն. Համբարձում Պերպերեան, 1959 Հոկտեմբեր, Պէյրուք:

Այս խօսքը լսեցի, երբ ընդունուեցայ ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանի նախապատրաստական (ՆԲ) դասարանը: Ես՝ Պէյրուքի հայահոծ համեստ թաղերէն քաղաքի կեդրոնը գտնուող այս վարժարանը յայտնուեցայ: Խոր երկխոսութեամբ առաջին օրը շարունակեցանք բակին մէջ: Տնօրէն Պրն. Արա Թօփեանը ինձի համար բաական «բարդ» հայերէնով բաներ մը խօսեցաւ, միայն կը յիշեմ երկար բառ մը՝ «առանձնաշնորհեալ»: Քանի մը ամիսէն եւ ապա հետագայ տարիներուն լիովին պիտի հասկնայի այդ բառին ամբողջ իմաստը:



Առաջնորդ Յովակիմեան Տերտերեան

հանութ ազգաց պատմություն, Վահէ-Վահեան (հայ գրականություն) եւ այլ ուսուցիչներ գիտական ճիշդութիւնով:

Քանի մը դասերէ ետք մենք արդէն գոց գիտէինք Պրն. Համբարձում Պերպերեանի եւ Սանթրուեան մականունով նաեւ ճանչցուած հարազատներու տանջալից ողիսականը: 1905-ին ծնած էր Կիլիկիոյ միօրեայ մայրաքաղաք



Միհրան Թումանյան



Յասմիկ Գարայեան



Տիգրան Էղիշեան

կարելոյր նպաստը բերած է նաեւ հայ եկեղեցական երաժշտութեան, տարիներ շարունակ սորվեցնելով եւ ղեկավարելով Սուրբ Պատարագի երգեցողութիւնները, յատկապէս Անթիլիասի Դպրեվանքէն ներս»:

Այո՛, առանձնաշնորհեալ էինք, որովհետեւ պիտի ունենայինք ուսուցիչներու փառանգ մը, որուն շնորհիւ մենք եղանք ինչ որ ենք այսօր: Այդ ուսուցիչներէն էին Զարեհ Մելքոնեանը (հայերէն), Համբարձում Պերպերեանը (երգ-երաժշտութիւն), Տ. Գեորգ վարդապետ Կարապետեան (գրաբար, դասական գրականութիւն), Երուանդ Քասունի (հայ գրականութիւն), Փօլ Կիրակոսեան (նկարչութիւն), Գերսամ Ահարոնեան (հայոց եւ ընդ-

Պրն. Հ. Պերպերեանէն սորվեցանք հայրենասիրական երգեր եւ սոլֆեճիօ: Սիրեցինք այդ երգերն ու Բ. Պատերազմէն ետք վերականգնուող Խորհրդային Հայաստանի մէջ յօրինուած աշխատանքային երգերը, «գեղաբանդակ» Երեսինն նուիրուած երգեր, որոնք մեր կողմէ կ'երգուէին մեծ ապրումով ու խանդավառութեամբ տօնակատարութիւններու եւ հանդէսներու ընթացքին: Ափսոսացինք, երբ ան մեկնեցաւ ԱՄՆ-ի Պոսթոն քաղաքը, ուր եղաւ ԹՄՄ-ի հիմնադիրը եւ մեծ զարկ տուաւ Արեւելեան ափի հայ երգ ու երաժշտութեան զգալի տարածման:

Այս տարի կը լրանայ ԱՄՆ-ի մէջ Թէքեան Մշակութային Միութեան հիմնադրութեան 55-ամեակը: Այս բարեբաստիկ առիթով Մեծագոյն Լոս Անճելըսի ԹՄՄ-ի երիտասարդ վարչութիւնը նախաձեռնած էր յոբելեանական տարեդարձը նուիրել իր մեծ երախտատրին՝ Մայեսթրօ Համբարձում Պերպերեանին: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Մեպտեմբեր 6-ին Իրանահայ Միութեան շքեղ սրահին մէջ՝ հովանաւորութեամբ Տ. Յովնան Արք. Տերտերեանի: Հանդիսութեան ներկայ էին նաեւ Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս Տիար Կարէն Իսրայէլեանն ու տիկինը: Հակիրճ խօսքով մը հանդէս գալով Հիւպատոսը իր շնորհակալական խօսքին մէջ շեշտեց մշակոյթի դերը եւ դրուատանքի խօսքեր ըսաւ կազմակերպողներուն:

Հանդիսութիւնը յաջեցած էր Հ. Պերպերեանի ստեղծագործութիւններու կատարումներով՝ մեներգներ, ջութակ, որոնց կատարողները կը հանդիսանային Լոս Անճելըսի լաւագոյն երաժիշտներէն ոմանք, ինչպէս Անահիտ Ներսիսեան (մեներգ), Պերճ Քարապետ (թնոր), Անջելա Ամիրեան (ջութակ), Հռիփսիմ Ռշտունի (դաշնամուրի ընկերակցութիւն): Սրտառուչ ելոյթ մը ունեցաւ նաեւ Հ. Պերպերեանի ամէնէն տարեց մտատրական աշակերտը՝ Դոկտ. Տ. Ջաւէն Աւագ քահանայ Արգումանեան (տեսերիզով): Կը մէջբերեմ հետեւեալ վկայութիւնը. «Պերպերեան իր կարելոյր նպաստը բերած է նաեւ հայ եկեղեցական երաժշտութեան, տարիներ շարունակ սորվեցնելով եւ ղեկավարելով Սուրբ Պատարագի երգեցողութիւնները, յատկապէս Անթիլիասի Դպրեվանքէն ներս»:

ԴՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՐԱՅԵԱՆ

Հանդիսատեսներուն մէջ զգալի թիւ մը կը կազմէին Համբարձում Պերպերեանի սան-սանուհիներ ու երգչախումբերուն մասնակցած անդամ-անդամուհիներ: Աշակերտներուն անունէն սրտառուչ ելոյթ ունեցաւ Պէյրուքի ՀԲԸՄ Յովակիմեան-Մանուկեան վարժարանի աշակերտներէն Տիգրան Էղիշեան, որ նախ իր անկեղծ շնորհակալութիւնները յայտնեց ձեռնարկը կազմակերպողներուն՝ այս գեղեցիկ հանդիսութիւնը յղանալուն համար: «Սիրելի եւ անմոռանալի ուսուցիչ,- ըսաւ ան,- ես եւ քու բազմաթիւ աշակերտներդ աշխարհասփիւռ, այսօր կ'ուզենք փոխանցել մեր երախտաշատ զգացումները քեզի եւ քու սրբազան հոգիիդ, որ կեանք մը ամբողջ նուիրեցիր հայ երաժշտութեան, եւ մեր հոգիներուն մէջ ծաղկեցուցիր անմահ սէրը մեր պանծալի մշակոյթին, մեր անմահ երգին եւ երաժշտութեան»:



Հիւպատոս Կարէն Իսրայէլեան

Համբարձում Պերպերեան ոչ միայն գլխաւոր դերակատարներէն մէկն էր այս ծաղկունքին, այլեւ հիմնադիրներէն մէկը: Իր ցուցաբերած վաստակին առ ի գնահատանք 1978-ին Երեսան հրաւիրուեցաւ եւ ընդունուեցաւ մեծ շուքով:

Այսօրուան պէս կը յիշեմ Երեսանի Ֆիլիպսոնիային մէջ Մայեսթրոյի ստեղծագործութիւններուն նուիրուած շքեղ համերգը, որուն իր ներկայութեամբ մեծ շուք կու տար Վազգէն Ա. Հայրապետը իր շքախումբով: Ֆիլիպսոնիայի նուագախումբը կատարեց Հ. Պերպերեանի ստեղծագործութիւնները, մեներգողներն էին «Հայաստանի Սոխակ» Գոհար Գասպարեանը («Կ'անձրեւէ տղաս»), եւ անգլուզական Լուսինէ Զաքարեան:



Պրն. Հ. Պերպերեանի համերգին ներկայ էին նաեւ ՀԲԸՄ-ի դպրոցներու շրջանաւարտներ (որոնց մէջ նաեւ ես), որոնք կ'ուսանէին Երեսանի բարձրագոյն հաստատութիւններու մէջ: Երբոր մեր պատուիրակութիւնը բեմ բարձրացաւ հսկայական ծաղկեփունջ մը նուիրելու, սիրելի ուսուցիչը յուզումով տալով մեր անունները եւ դառնալով հանդիսականներուն ըսաւ. «Ասոք իմ տղաքս են...»:

Քիչ կը պատահի, երբ ուսուցիչ աշակերտ սիրտէ սիրտ կապը կ'ընկերակցի մեզի կեանքի ամբողջ ընթացքին, կը մոռցուին մանր-մունր դէպքերը եւ աւելի կ'անուշանան հարազատ պահերը: Պրն. Համբարձում Պերպերեան իմ նման շատերու կեանքին մէջ եղած է այդ անձերէն մէկը: Փառք ու պատիւ իր փառաւոր վաստակին:

* * *

Անարդար պիտի ըլլայի եթէ ակնարկիս մէջ չդրուատէի կազմակերպիչներու նուիրումներին ու ցուցաբերած բախումներին: Արդարեւ, այս կոկիկ յայտագիրը կը պարտինք երիտասարդ վարչականներու, որոնք իրենց արհեստավարժութեամբ անմոռանալի երեկոյ մը պարգեւեցին մեզի եւ դեռ պիտի պարգեւեն: Յայտագիրը արագ եւ սահուն ընթացաւ շնորհիւ հաղորդավարներ Յասմիկ Գարայեանի (վարչութեան անդամուհի) եւ Միհրան Թումանյանի (ատենադպիր) հեզասահ հանդիսավարութեան: Այս փաստին իր փակման խօսքին մէջ անդրադարձաւ Թմիս Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տերտերեան ըսելով. «Այսպիսի որակաւոր հանդիսութիւններով մեզ ճանչցնել կու տան մեր մեծերը...այսպիսով մենք հաղորդ կը դառնանք պատմութեան եւ մեր մեծերու քողած արժէքներուն»:

Յիրաւի, Լոս Անճելըսի ԹՄՄ-ը ապահով ձեռքերու մէջ է:

Լոս Անճելըս, 14 Մեպտեմբեր 2024



ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին



«ՀԱՅԿԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՏԻԿՆԻԿՆԵՐԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ»

Յովհաննես Ըարամբերեանի անուան Ժողովրդական արուեստների թանգարանում բացուեց նոր ցուցահանդես՝ «Հայկական ծիսական տիկնիկների վերածնունդը» խորագրով:

Հեղինակը տիկնիկագործ-խաչբուռագործ Յովիկ Աւետիսեանն է:

Տիկնիկագործութիւնը, որը նախկինում յայտնի էր իբրեւ արհեստ, այսօր արդէն արուեստի իւրօրինակ արտացոլում է:

Տարիներ շարունակ ոգեշնչուելով ազգագրագետ Լուսիկ Ագուլեցու գործունեութեամբ, նրա թողած մշակութային մեծ աւանդով՝ Յովիկ Աւետիսեանը ներկայումս զբաղւում է ազգային արժէքների ուսումնասիրութեամբ եւ պահպանութեամբ, ստեղծում է ծիսական տիկնիկների եւ խաչբուռների իւրօրինակ հաւաքածուներ:

«Հայկական ծիսական տիկնիկների վերածնունդը» խորագրով ցուցահանդեսի 10 օրերի ընթացքում իրականացուեցին նաեւ վարպետաց դասեր:



«ԳԻՐԶԻԵՒ» ԱՆՍԱՄՊԼԻ ԲԱՑԱՌԻԿ ԵԼՈՅԹԸ

«Առնօ Բաբաջանեան» համերգարահում կայացաւ «Գիրքիւ» ԱՆՍԱՄՊԼԻ ԲԱՑԱՌԻԿ ԵԼՈՅԹԸ՝ գեղարուեստական ղեկավար՝ Լեւոն Իսկենեանի գլխատնութեամբ:

Այս տարի գերմանական հեղինակատու լեյբլում թողարկուեց «Գիրքիւ» անսամպլի երրորդ՝ «Զարթիր» խորագրով ալբոմը, որի շնորհահանդէսը կայացաւ համերգի ընթացքում: Այն վերախմաստաւորում է հայազգի մեծանուն մտաւորական, հոգեւոր ուսուցիչ, կոմպոզիտոր, պարուստյոյ եւ փիլիսոփայ Գեորգի Գիրքիւի երաժշտութիւնը՝ ժողովրդական գործիքաւորմամբ:

Չայնանակաւառակում անդրադաձ կայ նաեւ հայ աշուղների եւ բանաստեղծների հարուստ աւանդութեանը. Ջիւանի, Բաղդասար Դալիր, Սայաթ-Նովա:

Վերջին տարիներին միջազգային լայն ճանաչում ձեռք բերած անսամպլում ընգրկուած են հայկական աւանդական գործիքներ կատարող փայլուն երաժիշտներ: Անսամպլի հարուստ ստեղծագործական պատմութիւնը ներառում է մի քանի ալբոմներում, որոնք արժանացել են հեղինակատու մրցանակների...

Ելոյթներ ունենալով 30 երկրի շուրջ 150 քաղաքներում, աշխարհի ամենահեղինակատու համերգարահներում եւ խոշոր միջազգային փառատօներում, հայկական «Գիրքիւ» անսամպլը՝ Լեւոն Իսկենեանի ղեկավարութեամբ գեղարուեստական որակի նոր մշածող է սահմանում, կապելով արեւելքի եւ արեւմուտքի հնագոյն եւ ժամանակակից աւանդոյթները, ներկայացնում հայկական հոգեւոր եւ մշակութային է բարձրարուեստ դրսեւորումներ:



ՇԱՌԼ ԱԶՆԱԽՈՒՐ 100-ԱՄԵԱԿ

Շառլ Ազնաւորի 100-ամեակի շրջանակում, Շառլ Ազնաւորի անուան հրապարակում «ԱԶՆԱԽՈՒՐ» հիմնադրամը՝ համահիմնադիր եւ հոգեւարձուների խորհրդի նախագահ Նիկոլայ Ազնաւորը եւ հիմնադրամի գործադիր տնօրէն Քրիստինա Ազնաւորը կազմակերպել էին ու պաշտօնապէս բացեցին ֆրանսահայ լուսանկարիչ Ռոժէ Գասպարեանի լուսանկարներում» խորագիրը:



Բացելով հանդիսութիւնը Քրիստինա Ազնաւորը ասաց, որ ցուցահանդէսը կը գործի մէկ ամիս:Միջոցառմանը ներկայ էին լուսանկարչի դուստրը, թոռները, ղեւսպաններ, բազմաթիւ այլ հիւրեր:Հանրայայտ լուսանկարիչը 60-ականներից մշտապէս լուսանկարել է Շառլին մինչեւ իր եւ Շառլի կեանքի վերջին պահերը:

«Բացելով այս բացառիկ ցուցահանդէսը յարգանքի տուրք է Շառլ Ազնաւորի եւ Ռոժէ Գասպարեանի յիշատակին,- ասաց լուսանկարչի դուստրը Լիտիան»: Նա պատմեց, որ իր հայրիկի երազանքն է եղել մայր հայրենիքում իր ցուցահանդէսը բացել, սակայն ամիսներ առաջ նա հեռացել է կեանքից եւ իր պատգամը այսօր իրականացնում են «Ազնաւոր» հիմնադրամի աջակցութեամբ եւ այն նուիրում է մեծ շանտնէի 100-ամեայ յոբելեանին:

Մի քանի տասնեակ լուսանկարներում Շառլ Ազնաւորի հանդիպումներն են անուանի մարդկանց, ընտանիքի անդամների եւ նաեւ համերգային դահլիճներից կադրեր եւ այլն:Ի հարկէ լուսանկարների հաւաքածուն անցնում է մի քանի հարիւրը, որոնք կը յանձնուի Ազնաւորի տուն-թանգարանին, մշտական ցուցադրութեան համար:

ՄԻՔԱՅԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ՝ 70

Երեսնի Կինոյի տան մեծ դահլիճը մարդաշատ էր, բոլորը եկել էին մասնակցելու եւ շնորհաւորելու մեր ժամանակների ամենավառ մի արուեստագէտի՝ Միքայէլ Պօղոսեանի 70-ամեակը: Մուտքի մօտ օրուայ յոբելեարը բոլորին սիրով դիմաւորում էր ու ընդունում շնորհաւորանքներ: Յոբելեանական միջոցառումը բացեց անուանի արուեստաբան, կինոգէտ Դաւիթ Մուրադեանը ու մանրամասնօրէն բնութագրեց սիրուած դերասանին, ռեժիսորին ու թուեց նրա յիշարժան դերակատարումներն ու նկարահանած ֆիլմերը, որոնք մի քանի տասնեակ են:

«Միքայէլ Պօղոսեանի չի վախճնում ժամանակից, աւելի ճիշդ՝ ժամանակի մարտահրաւրներից: Նա գտնում է դրանց պատասխանելու գեղարուեստական եղանակը: Երբեմն էլ ինքն է մարտահրաւր նետում: Իսկ ամենակարեւորը, ի վերջոյ, այն է, որ նրա արուեստը մեր ժողովուրդի կողմից սիրուած է եւ ամենալայն խաւերի կողմից պահանջուած»:

ահա այսպէս բնորոշեց օրուայ յոբելեարին Դաւիթ Մուրադեանը ու բեմ հրաւիրեց Միքայէլ Պօղոսեանին: Վերջինս շնորհակալութիւն յայտնեց ներկաներին ու ասաց. «Ամէն ինչ ճիշդ է... Ես իմ կեանքի ընթացքում, հանդիպել եմ մարդկանց, որոնց խորհուրդները միշտ ուղեկից են եղել ինձ համար.. մարդկանց, ովքեր հաւատացել են ինձ եւ եղել կողքիս... մարդկանց, որոնց հետ անցել եմ բուռն ստեղծագործական ճանապարհ եւ դեռ անցնելու եմ... շնորհակալ եմ բոլորին...»:

Երկարատեւ ծափերին յաջորդեց «Ամէն ինչ ճիշդ է» ֆիլմի ցուցադրութիւնը, որում մանրակրկտօրէն հաւաքուել էր Միքայէլ Պօղոսեանի հրաշալի դրականատարումներից, ֆիլմերից հատուածներ, որոնք յոբելեանի շուրջ 40 տարուայ քրտնաջան ու նուիրեալ ստեղծագործական ուղին էր նկարագրում:

Ո՞վ է Միքայէլ Պօղոսեանը. նա մի արուեստագէտ է, ով չի տեղաւորում մէկ բանաձեւի մէջ:Նա միշտ ճանաչելի է, բայց միշտ բազմազան ու տարբեր: Բոլոր ժանրերը նրա տարերքն են, որովհետեւ վառ թատերայնութիւնը նրան բնորոշ է նոյնքան, որքան կեանքի մէջ ու կեանքի հետ ապրելու դիմագիծը: Նա մէկն է այն դերասաններից, որոնք կարողանում են դառնալ դերի հեղինակ, անկախ այն հանգամանքից, թէ որ ռեժիսորի ֆիլմն է կամ որ ռեժիսորի բեմադրութիւնը...

Ֆիլմի դիտումից յետոյ Միքայէլ Պօղոսեանը ներկաներին հրաւիրեց միասին, մէկ գաւաթ հայկական գոնեակով, գինով ու խորտիկներով նշելու իր տօնը եւ հէնց այդ առիթով նա պատրաստել էր յատուկ յուշանուէրներ, որոնք սիրով նուիրում էր իր յարգարժան հիւրերին:

Յոբելեանը շնորհաւոր, թէեւ դու 70 տարեկանի պէս չես քեզ պահում ու զգում, մաղթում ենք ու սպասում քո նոր ստեղծագործական մտայղացումների իրականացմանը:

ՆՈՐ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀԻՆ

Հայաստանի ազգային պատկերասրահի հաւաքածուն համալրուեց եւս մէկ ստեղծագործութեամբ: «Նուիրատուներ եւ նուիրատուութիւններ» խորագիրն էր կրում օրեր առաջ Ազգային պատկերասրահում բացւած Վալմարի ինքնատիպ հաւաքածուից 60 աշխատանքների ցուցադրութիւնը՝ մեր տաղանդաւոր արուեստագէտների ճանաչելու, արժեւորելու եւս մէկ հնարաւորութիւն, հաւաքորդների դերը կարեւորելու, հայ կերպարուեստի զանաւարանը հարըստացնելու, պահպանելու եւ հանրութեանը ներկայացնելու գործում:

«Ես իմ էութեամբ ինքնատիպութիւն ու եզակիութիւն սիրող անձնաւորութիւն եմ, չեմ սիրում իրար մեծան նկարչութիւն, ես հպարտացել եմ այս նկարիչներով, ձեռք եմ բերել նրանց գործերը եւ դրանից մեծ հաճոյք եմ ստացել» ասաց ՀՀ ժողովրդական նկարիչ Վալմարը /Վոլոտիա Մարգարեան/, ով դեռեւս 1970-ականներից սկսել է հաւաքել գործեր՝ ձեւաւորելով հաւաքած: Այն ընդգրկում է հայ կերպարուեստի նշանաւոր արուեստագէտների գեղանկարչական ու գրաֆիկական գործերի միայն մի մասը (շուրջ 60 գործ)՝ հաւաքագրուած գնումների, փոխանակման եւ նուիրաբերութեան միջոցով:Վալմարը կարողացել է արժեւորել իր ընկերների գործերը եւ ստեղծել հարուստ հաւաքածու: Վերաբերմունքն իր ընկերների եւ հանաքածուի հանդէպ շատ բան կարող է պատմել հեղինակի մասին, որը ջերմ յիշողութիւնների անվերադարձ վկաներն են:

Այս ցուցադրութիւնում տեղ գտած Մարտին Պետրոսեանի («Սոֆիա», 1993, թուրք, ջրաներկ, 27 x 21) գրաֆիկական աշխատանքը Վալմարի նոր նուիրատուութիւնն է Հայաստանի ազգային պատկերասրահին:



ԼԻՔԱՆԱՆ մԵԾ ԴԱՏԵՐԱԶՄԻ ԴԷՄ յԱՆՊԻՄԱՆ...

Ֆատուկ «ՊԱՅՔԱՐ»-իս

ԻՍՐԱՅԷԼԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՑԱԾ ՑԱՆՑԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ...

Իսրայելի անվտանգության մարմինները Լիբանանի մեջ եղած «ցանցա-
յին» գրոհներն ժամեր անց շրջանառության մեջ դրին տեղեկություն եղածին
վերաբերելով: Մասնավորապես «Իքս» հարթակին վրայ, իսրայելացի մեկ
ալեկի պատասխանատուները գրառումներ կատարեցին ու «պատմեցին»
այն մասին, որ Իսրայելի գաղտնի սպասարկությունը՝ «Մոսատ»-ը կը կանգնի
«Գոտկատեղեն ներքե» ընդհանուր խորագիրը կրող գործողության ետին:



Իրականության մեջ իսրայելեան գաղտնի սպասարկությունները «հեռա-
վար» պատերազմի մը շերտը բանալով յաջողած էին ներթափանցել «Հրզ-
պալա»ի ցանցային կապի մեկ համակարգէն ներս, որուն սարքերը (շատերը
անշուշտ կը յիշէք երկար տարիներ առաջ օգտագործուած «Փէյճըր»ները)
մէկիկ-մէկիկ պայթած էին պատճառելով հազարաւոր վիրաւորներ, իսկ
գոհերուն թիւը կը հասներ՝ 14-ի:

Դէպքէն ժամեր անց մեծ թիւով ռազմական վերլուծաբաններ հանդէս
եկած էին որոշակի մեկնաբանութիւններով ըստ որոնց, այդ «Քէյճըր»ները
պայթած էին ցանցահեռային միաժամանակեայ գրոհի մը հետեւանքով եւ
այդ «գործողութիւն»ը յաջողութեամբ պսակուած էր պարզապէս լարային
տաքացման մեթոտը գործի դնելով:

Ինչքանով էր ճիշդ այս վերլուծութիւնը ցարդ յստակ չէ, սակայն աւելի ուշ
հրապարակ հանուած բազմապիսի վարկածները կերպով մը կու գային հաս-
տատելու, որ եղածը բաւական խորունկ ուսումնասիրութեան արդիւնք էր:

Այս առումով ալ ամերիկեան «Էքսիոս» վերլուծական հարթակը կը գրէր,
որ Իսրայել այս գործողութեան համար տրամադրած էր առնուազն 15 տարի:

Լիբանանեան «Հրզպալա» կազմակերպութիւնը, (որուն համար անչափ
կարեւոր է ունենալ ներ-ցանցային ապահով միջոցներ) ասկէ հինգ ամիս
առաջ մեծ քանակութեամբ (կ'ըսուի, որ մինչեւ 4000 սարքեր) «Փէյճըր»
սարքեր պատուիրած էր՝ Թայուանական ընկերութեան մը: Ու ենթադրելի է,
որ այդ ընկերութիւնը, (որ ըստ երեւոյթին աւելի շատ կը զբաղի տարբեր
երկիրներու իր պատուէրները տալու միջնորդութեամբ) այդ քանակը ապա-
հովելու համար դիմած էր հունգարական ընկերութեան մը, որ շրջան մը ետք
պատրաստած ու ապահոված էր այդ սարքերը... որոնք աւելի ուշ հասած
էին Լիբանան:

Հոս է անշուշտ, որ կը բացուի «Բանտորա»ի հարցումներու մեծ արկղը,
ու առաւելաբար պիտի շեշտադրուին, թէ ուր եւ ինչ միջոցներով այդ սար-
քերուն մէջ դրուած են պայթուցիկ փոքր կտորներ:

Տակաւին կ'ըսուի, որ նաւուն մէջ բեռնուած ապրանքը որոշ ժամանակ
մը «հանգչած» է եւրոպական նաւահանգիստներէն մէկուն ջուրերուն ու
անկէ ետք ճամբայ ելած ու «ապահով» կերպով հասած է Պէյրութ:

Նման դէպքերու պարագային անշուշտ շատ վաղ է հասնիլ վերջնական
վարկածներու ու յստակ է անշուշտ, որ եղածը «մէկ օրուան գործ» մը չէ, ուր
կան բազմապիսի չեղեւացող մանրամասնութիւններ, որոնք իրարու կապուած
են շատ մանր թելերով:

ՀԱԶԱՐԱԽՈՐ ՍԱՐՔԵՐՈՒ «ՊԱՅԹՈՒՄ»Ը



Ի դէպ պայթումի օրը երեքշաբթի 17 սեպտեմբերին, Լիբանանեան աղ-
բիւրներ կը հաղորդէին, որ հազարաւոր «Փէյճըր» սարքեր պայթած են եւ
մեծ ցնցումի պատճառ դարձած են ամբողջ Լիբանանի ու նաեւ Սուրիոյ

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

կարգ մը սահմանային շրջաններուն մէջ: Կը նշուէր նաեւ, որ այդ սարքերը
կը գտնուէին, ոչ միայն «Հրզպալա»-ի զինեալներուն մօտ, այլ այդ կազմա-
կերպութեան տարբեր առողջապահական, ընկերային, կրթական կամ այլ
մարմիններու մէջ աշխատող անհատներու մօտ:

Արագօրէն կը տարածուէր լուրը այն մասին, որ «Հրզպալա»-ի 500-ի չափ
զինեալներ ու անդամներ կորսնցուցած էին իրենց աչքերը եւ կուրացած:

Նոյն ուղղութեամբ կը հաղորդուէր, որ եղած «գործողութիւն»ը ստացած
էր Նաթանիախույի «օրհնութիւն»ը եւ «կանաչ լոյս»ը, որ կերպով մըն ալ Իս-
րայելի քաղաքական շրջանակները «պատահար»ը համարած էին յաղթա-
նակ ու նաեւ «Հրզպալա»-ի վրայ «ներքին ճնշում» բանեցնելու «միջոցառում»:

Եղածը խորքին մէջ գրեթէ քսան տարի առաջ (2006) նոյն «Հրզպալա»-ի
կողմէ կիրառուած «անակնկալի գործօն»ին պատասխան-նամակ մըն է, որ
կը փորձէր հաւասակշռութիւն մը բերել «Հրզպալա»-ի իսրայելեան նաւու մը
ընկղմել տալու գործողութիւնէն ետք, որ այդ օրերուն կը համարուէր «մեծ
յաղթանակ» ոչ միայն՝ «Հրզպալա»-ին այլ ամբողջ դիմադրական ճակատին:

Դէպքէն անմիջապէս ետք լարուած իրադրութիւն մը կը ստեղծուէր ամ-
բողջ Լիբանանի մէջ, իսկ եղած գրոհին ճիշդ յաջորդ օրը «կը պայթեցուէին»
«Հրզպալա»-ի զինեալներուն օգտագործած անթել հաղորդակցութեան
տասնեակ սարքեր վախ ու սարսափ տարածելով յատկապէս Պէյրութի հա-
րաւային արուարձանին մէջ:

ԳՐՈՀԷՆ ԵՏՔ ...

Դէպքէն անմիջապէս ետք տարբեր մակարդակի հարթակներ վերլուծե-
լով եղածը կ'արտայայտէին մեծ վախ մը, որ պատահարը կրնար սկիզբ
դառնալ մեծ պատերազմի:

Անշուշտ պատերազմի վտանգը հիմա ալ կը շարունակէ «թեւածել» Լի-
բանանի երկնակամարին վերեւ, ու գալիք զարգացումները մեծ հաշուով
կապուած են այն հանգամանքին հետ, որ «Հրզպալա» ինչ որակներու պա-
տասխան պիտի տայ Իսրայելին:

Իսրայել, որ հանգիստ չէ Լիբանանի հետ սահմանային շրջաններուն
մէջ եղած վիճակներէն ու «Հրզպալա»-ի անդորդուելիութիւնէն, անշուշտ պի-
տի փորձէ «խաղի կանոններ»ը եւ ամէն գնով ետ մղել «Հրզպալա»-ն Իսրա-
յելի հետ սահմանային շրջաններէն...:



Իր կարգին «Հրզպալա»-ն կերպով մը «պարտաւոր է» պատասխան
հարուած մը տալու Իսրայելին, իսկ լռութիւնը կամ անտեսումը աւելիով
կրնայ թուացնել այդ կուսակցութեան ուժն ու դերը:

Գաղտնաբառը այս պարագային այն է, որ «Հրզպալա»-ն շատ խորքա-
յին կերպով ներթափանցուած է:

Ճիշդ է, որ համատարած պատերազմի ժամանակը տակաւին չէ հասուն-
ցած, սակայն եղած գրոհը տակաւին երկար ժամանակ, պիտի հանդիսա-
նայ լուրջ քննարկումներու նիւթ եւ առարկայ, մանաւանդ անոնց համար,
որոնք շատ ծանր կը տանին «Հրզպալա»-ի այսօր ներկայացուցած դէմքը,
ներուժը, եւ ռազմական ներկայութիւնը:

Այս բոլորէն անդին, «Հրզպալա»-ի կողմէ կը կատարուէին բաւական
յստակ բնութագրումներ եղած գրոհը համարելով աննախադէպ:

Այդ մասին «բաց» կերպով կ'արտայայտուէր կազմակերպութեան առաջ-
նորդ՝ Մէլիտ Հասան Նասրալլան: Ան կը նշէր, որ Իսրայելի կատարած
յարձակումին նպատակը «Հրզպալա»-ն «ներսէն» տկարացնելն էր...: Ան
նաեւ կը դիտարկէր, որ հակառակ պատահածներուն իր առաջնորդած
կուսակցութիւնը չի պատրաստուիր հրաժարիլ Կազային նեցուկ ու զօրակ-
ցութիւն ցոյց տալու ընտրանքէն, վստահեցնելով, որ հակառակ Իսրայելի
զօրեղութեան իրենք ուխտած են պայքարիլ մինչեւ վերջ:

Նասրալլայի խօսքը, որ հաւանաբար չունէր առաջուան հմայքը, ցոյց
կու տար, թէ Լիբանան երկիրը ինչքանով խոցելի է, այն պարագային, երբ
Լիբանանի փրկութեան միակ ճանապարհը կեղղոնաձիգ եւ ուժեղ պետու-
թիւն, պետական համակարգ մ'ունենալն է:

Յստակ է, որ այս պայքարը տակաւին երկար է ու գալիք փուլերուն, այլ
խնդիրներու կողքին «Հրզպալա»-ի համար ամենաառաջնական օրակարգը պի-
տի ըլլայ «մաքրել» իր ներսը, որովհետեւ առանց այդ «մաքրութեան» նման
արարքներ եւ գրոհներ Իսրայելի համար ու անոր ունեցած ռազմական ու-
նակութիւններուն համար պարզապէս խաղ ու պար պիտի ըլլան ու աւելիով
ընկճեն առանց ատոր ալ մեծ տառապանքներու մէջ եղող Լիբանանը:

Երեւան

ՉԻՆԱՍՏԱՆ ԵՆՈՒՑՈՎ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԵՐԿՐԱԳՈՒՆԴԻ

ՀԶՕՐԱԳՈՅՆ ԵՐԿԻՐԸ՝ ԱՄԷՆ ԲՆԱԳԱՒԱՌԻ ՄԷՋ

(ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԵԱՆԻ 1949 Թ.Ի ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԱՕ ՅԷ ԹՈՒՆԿԻ ՀԵՏ՝ ՀԻՄՔԵՐԸ ԴՐԱՒ ՉԻՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ)

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՀԱՍՏՈ ՄՈՍԿՈՎԱ

- «Առաջնորդությունը Սթալինի ցուցմունքներով, փորձեցի համոզել Մաո Յե Թունկը չյետաձգել յեղափոխական կառավարության ստեղծումը Չինաստանի մեջ, շատ արագ՝ միացնել ճակատի հիմքի վրայ, որ շահաբեր պիտի ըլլայ: Այսինքն՝ Նանքինկի եւ Շանկիայի գրաւումն ետք՝ երբ անոնք հանդէս պիտի չգան որպէս ազատամարտիկներ, բայց որպէս յեղափոխական կառավարութիւն, որ պիտի գերազանցէ հետագայ պայքարը Չանկ Թայ Չէքի դէմ...: Ես կ'ըսէի իրեն որ պետք է շարժիլ դէպի Պէյճին անմիջապէս»:

(Հայագի մեծագոյն քաղաքական եւ դիւանագիտական գործիչ՝ Անաստաս Միկոյեան 1949 թ. Չինաստան):

«Չինաստան այսօր ունի 125 միլիոն հաշուող թրքագգի ույկուրներու հարց, որոնք անընդհատ կը շահագործուին Թուրքիոյ եւ անոր արբանեակներուն եւ հովանաւորներուն կողմէ, անկայուն իրավիճակ ստեղծելու Սենկանք («Լուչենսկոն Թուրքեստան»)»-ի մէջ: Այնպէս որ ժողովրդային Չինաստանի կառավարութիւնը օգնած է եւ միշտ ալ պիտի օգնէ Հայաստանի Հանրապետութեան՝ դիւանագիտական բարձրագոյն շրջանակներու մէջ, տնտեսական բազմապիսի օգնութիւններով, որոնք դրկած է մեր երկրին:

(Դոկտ. Նուպար Չալըմեան, ծագումով իրաքահայ, վաստակաւոր թարգմանիչ, պատմաբան, դասախօս, 16 տարի Հայաստանի մէջ Չինաստանի դեսպանատան խորհրդական է):



Փարիզի 2024-ի ողիմպիական խաղերու ընթացքին, բիրտոր հանդիսականներ եւ աւելի քան երեք միլիոնի հասնող հեռուստադիտողներ ապշահար մնացին ժողովրդային Չինաստանի հսկայական մարզական պատուիրակութեան ելոյթներուն, ի տես բազմատեսակ մարզախաղերու հարթակներուն վրայ: Երիտասարդ, գեղեցկադէմ, հիանալիօրէն մարզըւած եւ յաղթանակի համար պայքարող է չին ու չինուի մարզիկ-մարզիկուհիները առատաձեռնօրէն պարգեւատրուեցան իրենց երկրի պետական թէ այժմ արտօնուած ազատ գործարարութեան, մարզասէր շրջանակներուն կողմէ: Օրինակ սեղանի թէնիսի բարձրորակ մետալակիր Բիլիանգուի Չեն Սենկ, ստացաւ 6 քկ. ոսկի, ինչ որ անհաստատի կը թուէր 20-ամեակ մը առաջ՝ համայնավար խիստ վարչակարգի պայմաններուն մէջ, որուն բարեկարգման մէջ մեծ դեր խաղաց Թենկ Հսիաօ Փինկ, որուն կարճ հասակին մասին ակնարկ կատարած ԱՄՆ-ի երբեմնի նախագահ Ռիչըրտ Նիքսըն Պէյճինկէն պատմական այցելութեան ընթացքին հետեւեալ պատասխանը ստացած է Մաո Յե Թունկէն - «Թենկ Հսիաօ Փենկի հասակէն երեք անգամ աւելին գետնին տակն է...»:

Կասկած չկայ ըսելու, թէ չինացիք հանճարեղ եւ շատ աշխատասէր, գրկանքներու վարժուած ժողովուրդ են: Իրենց փառաւոր եւ խռովայոյզ հնագոյն անցեալին մասին, կատարած կարեւորագոյն գիտերուն եւ յայտնագործութիւններուն վերաբերեալ բազմահազար մագաղաթներ, գիրքեր եւ ֆիլմեր պատրաստուած են՝ փիլիսոփաներ Կանֆիքիուի, Շաօլինի տաճարի, քարածուխի օգտագործման, մետաքսի ճանապարհի, թղթադրամի եւ թուղթի գիտերու, տարանցիկ ճանապարհաշինութեան, Չինաստանի Մեծ Պախալի, օտարերկրեայ բոլոր նուաճողները իրենց մշակոյթով ձուլելու մասին:

20-րդ հազարամեակը սակայն ճակատագրական էր Չինաստանի վերջնական միաւորման, կայուն վարչակարգի հաստատման, բարգաւաճման եւ աշխարհի հզօրագոյն երկիր դառնալու ճանապարհին, անգլիական եւ ճափոնական գաղութատիրութեանց ճանկերէն մասամբ ազատագրուած հսկայական երկիրը, 1945 թ.ը մղեց նաեւ քաղաքացիական պատերազմ Արեւմուտքի դրածոյ գօր. Չանկ Բայ Չէքի Պէն Չինաստանի հզօրացող համայնավար կուսակցութեան միջեւ Մաո Յե Թունկի բազմաթիւ համակիրներուն որպէս պատասխան Խորհրդային Միութեան գերագոյն հրամանատար Սթալին՝ Չինաստան կը դրկէ հայագգի նշանաւոր քաղաքական գործիչ եւ դիւանագետ, տնտեսագետ Անաստաս Միկոյեանը: Բաւականին դժուարին եւ վտանգաւոր օդային թռիչքէ ետք, Միկոյեան ի վերջոյ

կը հանդիպի Մաո Յե Թունկի հետ՝ լեռներու վրայ ապաստանած հետամնաց բայց չին յեղափոխականներով հզօրացած գիւղական տան մը մէջ շաքրուան մը հանդիպումներէն ետք, Միկոյեան կը յաջողի համոզել չին դեկավարը, որ դուրս գայ գիւղացիական յեղափոխական շրջանակներէ եւ ազատագրէ գլխաւոր քաղաքներ Պէյճինը, Նանքինը, Շանկիայը, որպէսզի կարողանան դառնալ օրինական կառավարութիւն եւ պետութիւն եւ ոչ թէ արձակագէներ՝ Խորհրդային Միութեան պաշտօնական ճանաչմամբ:

Միկոյեանի խորհուրդներուն ու գծած (Սթալինի հետ) ճանապարհի քարտէսը կ'ընդունուի Չինաստանի համայնավար կուսակցութեան ղեկավարութեան կողմէ, յանձնա նաեւ Մեծն Չուէն-Լայի, դառնալով յաղթանակի ուղի, Արեւմուտքի կողմէ ֆինանսատրուող ու զինուող Ջօր. Չանք Կայ Չէքի դէմ: Վերջինս կ'ապաստանի Ֆորմօզաքայլան կղզին հիմնելու Չինաստանի հանրապետութիւնը, որուն ազատագրումը մինչեւ այսօր կը պահանջէ ժողովրդային Չինաստանի հանրապետութիւնը...:

Սակայն շատ չանցած, 1250-53 թթ.ն Մաո Յե Թունկ, Սթալինի եւ Քոբէայի համայնավար կուսակցութեան ղեկավար Քեմիլ Սունկ կը մխրճուին քորէական ահաւոր պատերազմին մէջ ընդդէմ «ՄԱԿ-ի ազատարար զօրք»-երուն եւ անոնց հովանաւոր ԱՄՆ-ի դէմ, երկու կողմէն ալ իյնալով բիրտոր զօրքեր, նաեւ հազարաւոր թուրք զինուորներ: Մինչ գօր. Տակլըս Երքարթըր կը ցանկայ 25 հիւլէական ռումբերով քարտէսն ընել Չինաստանը, ԱՄՆ-ի նախագահ Հերի Թրումանը, որուն հրամանով Հիւրօլիմայի եւ Նաքագաքի վրայ հիւլէական ռումբեր նետուած էին 1945 թուին, անմիջապէս պաշտօնագրով կ'ընէ գօր. Տ. Մրքարթըրը կը կնքուի զինադադար եւ քորէաները կը վերադառնան 38-րդ հորիզոնականէն ստեղծելով Հիւսիսային Բորէայի համայնավար հասարակարգի եւ Հարաւային Բորէայի արեւմտամէտ հանրապետութիւններ:

Դժբախտաբար սանձազերծուած տեղի կ'ունենայ Պաղ պատերազմի մթնոլորտին մէջ: Սթալինամէտ հասարակարգը երեւան կու գայ խոր կործանումով, Խուրուշչեւի եւ գլխաւոր խորհրդական եւ ղեկավարութեան անդամ Միկոյեանի առաջնորդութեամբ: Յարաբերութիւնները կը վատթարանան Մոսկուայի եւ Պէյճինի միջեւ:

Մանաւանդ Խորհրդային Միութեան ղեկավար Պրեժնեւի իշխանութեան տարիներուն: 1971 թ. ԱՄՆ-ի նախագահ Ռիչըրտ Նիքսըն եւ գլխաւոր խորհրդական Հենրի Էսինգըր կ'այցելեն Պէյճին, փինկ-փոնկային դիւանագիտութենէ ետք: Մինչ Չինաստանի եւ Խորհրդային Միութեան սահմաններուն վրայ տեղի կ'ունենան արիւնալի բախումներ, ուր կը գործածուին լազերային զենքերու յարաբերութիւնները կը բարեւաւորին, սակայն Լեոնիտ Պրեժնեւի մահուրէն ետք, մինչ Չինաստան կը վարէ խելամիտ եւ հաւասարակշռուած քաղաքականութիւն, խուսաբելով եւ ծախողեցնելով կորպաշովեան խայտառակ «Փերեսթրոյքա»ն, որ միլիոնաւոր քաղաքացիներու դժբախտութեան պատճառ կը դառնայ: Չինաստանի մէջ տնտեսական եւ ընկերային բարեկարգումները տեղի կ'ունենան համարաւոր, համայնավար կուսակցութեան ազատական դրսեւորումներով, թէեւ Ան Մին հրապարակի հրահրուած ցոյցերէն եւ ըմբոստութեան փորձերէն ետք Թեն Հսիաօ Փինկէն մինչեւ այսօրուան 3-րդ նախագահը (1954-էն ի վեր Մաո Յե Թունկի եւ Լիու Շաօքիէն ետք) սիրուած եւ Չինաստանի բարգաւաճման նուիրուած Խի Դին Փինկի օրերը՝ Չինաստան կը յաղթահարէ բազում դժուարութիւններ, յատուկ վերաբերմունք ցոյց տալով հայրենադարձ Հոնկ Բոնկի, Թիպէթի եւ Սենեանք (Չինական Թուրքեստան) նահանգներուն հանդէպ: Արիւնալի դէպքերէն ետք, հրահրուած «սուլթան» ինքնասիրահարուած «Տէօնմէ» թուրք Էրտողանի կողմէ, խառնակիչ ուղղորդ ղեկավարներուն մէկ մասը կը ձերբակալուին եւ մահապատիժի կ'ենթարկուին, ուրիշներ կը փախչին Թուրքիա եւ ապա դառնալով Սուրիոյ մէջ այժմ գերեզմարուած «իսլամական պետութեան» սուլթանիկներ: Այս պատճառով ալ, տարիներ շարունակ Չինաստան ՄԱԿ-ի մէջ միշտ կանգնած է Հայաստանի հանրապետութեան կողքին, բազմապիսի օգնութիւններ յրկելով Երեւան (ըստ վաստակաշատ դիւանագետ, թարգմանիչ, պատմաբան, Հայաստանի մէջ Ժող. Չինաստանի դեսպանատան 16 տարի խորհրդական դոկտ. Նուպար Չալըմեանի...): Դժբախտաբար, սակայն այսպէս կոչուած «Անկախ Հայաստանի բոլոր ղեկավարները՝ Լեւոն Տէր Պետրոսեանէն մինչեւ Փաշինեան» ոչ մէկ լուրջ փորձ ըրին ռազմաքաղաքական եւ տնտեսական խիստ կարեւոր կամուրջներ հաստատելու աշխարհի հզօրագոյն երկիր դարձող ժողովրդային Չինաստանի հետ, որ մեր հակաթրքական պայքարին մէջ մեր բնական դաշնակիցն է այսօր:

Մինչ իր գերադիական քաղաքներով, ճարտարարուեստով, «Զովիտ-19»-ի դէմ տարած փառաւոր յաղթանակով, արդէն երկրագունդի ամենամեծ ռազմական թէ տնտեսական մատուցումները ունեցող «Արեւելքը կարմիր է» երկիրը, հասաւ մինչեւ Հրատ մոլորակ, շատ շուտով իր դրամանիշ «եռուան»-ն ալ պիտի գրաւէ որպէս առեւտուրի գլխաւոր շրջանառութեան միջոցը համաշխարհային առեւտուրին մէջ:

Պէյրութ - Մոսկուա - Երեւան - Շէն
(Հեռախօսով)

ԴՈԿՏ. ՎԱՐԱԳ ԳԵԹՍԵՄԱՆԵԱՆ. ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ, «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ» ԵՒ «ՄՏԱԽՈՐԱԿԱՆ ԱԶԱՏ ԴԱՆՏԸ»

Տարբերակ21 հարթակի շաբաթական podcast-ի զրուցակիցն է Պեյրոսի ամերիկեան համալսարնի պատմության բաժանմունքի դասախոսներէն ղոկտ. Վարագ Գեթսեմանեանը: Վարագը վերջերս լիբանանահայ մամուլին մէջ հրապարակած էր «Ի՞նչ Նոր Բանաձեւ Լիբանանահայ Հաւաքական Ինքնութեան» խորագրով յօդուած մը, որ կ'անդրադառնայ լիբանանահայ համայնքի



բարդ եւ զարգացող ինքնութեան: 20-րդ դարու ընթացքին այս ինքնութիւնը ձեւաւորուած է առանցքային գործօններով, ինչպէս՝ ցեղասպանութեան յիշողութիւնը, լեզուն, կրօնը, ազգայնական գաղափարախօսութիւնները, նաեւ պատմական կարեւոր իրադարձութիւններով, ինչպէս՝ Հայաստանի անկախութիւնը եւ Արցախի յաղթանակն ու հետագայ զարգացումները: Ինքնութեան այս զարգացումը պատահած է կուսակցական եւ կրօնական հաստատութիւններու շրջագիծի մը մէջ, որ ժամանակի ընթացքին դարձած է տէրը այդ ինքնութեան եւ ստեղծած հաւաքական կեանքի իշխանական համակարգ մը:

Սակայն, Լիբանանի քաղաքական, տնտեսական եւ ապահովական յամեցող տագնապներու պայմաններուն մէջ, լիբանանահայ ինքնութեան այս աւանդական ըմբռնումը երթալով կ'առնուի հարցականի տակ: Վարագը սեղանի վրայ կը դնէ «քաղաքացիական հասարակութեան» մը ձեւաւորման օրակարգը, որ մեր գրոյցին ընթացքին պիտի փորձենք քննարկել ու պարզաբանել: Այս քննարկումը կարեւոր է, որովհետեւ լիբանանահայ համայնքը այսօր կը դիմագրաւ արեւմտականացման, այսինքն՝ դէպի արեւմտեան երկիրներ գաղթի, ժողովրդագրական փոփոխութիւններու՝ թիւի նօսրացում, եւ մշակութային աշխուժութեան անկում: Ուրեմն կարեւոր կը դառնայ նոր ինքնութեան եւ հաւաքական գոյակցութեան նոր համակարգի մը ստեղծումը կամ անոր փնտռումը:

Այս ճիգը կը պահանջէ նաեւ աւանդական իշխանական համակարգէն դուրս պայմաններու ստեղծումը, ինչպէս իր յօդուածին մէջ կ'ընդգծէ Վարագը. «Մտաւորական ինքնավար դաշտի ի սպառ բացակայութիւնը մեծագոյն խոչընդոտն է ներկայ լճացումը յաղթահարելու»:

Այս գրոյցով կը փորձենք ստեղծել այդ մտաւորական ինքնավար դաշտը եւ կը քննարկենք ինքնութեան նոր բանաձեւի մը կարելիութիւնները:

Վ. Թ.

Օրինութեանք՝ գանատահայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Արզար եպս. Յովակիմեանի

Հովանաւորութեանք՝ Գանատայի մօտ ՀՀ-ի լիազօր եւ արտակարգ դեսպան տիկ. Անահիտ Յարութիւնեանի

«ԱՊԱԳԱՅ» Շաբաթօրէրի 49-րդ Տարեդարձին

ԹՄՄ Պատգամաւորական ժողովին առիթով

Պաշտօնական ճաշկերոյք՝
և Հայկական Էստրատային, Ժողովրդական ու Աշուղական
Երգերու Բացառիկ Փառատօն

Գեղարուեստական ղեկավար՝ Մամուէլ Քեօշկերեան

	Մասնակցութեամբ՝	Արտէն Արաբեան քառեակի՝
	Սօփրանօ	Մաշա Ճիհանեանի
	Թէնօր	Մանուէլ Աշըգեանի

Շաբաթ՝ 5 Հոկտեմբեր 2024, երեկ. Ժամը 7:30-ին
Թեքէան Մշակ. Միութեան «Յ. եւ Ս. Արզումանեան» Սրահին մէջ

Մուտքի նուէր՝ \$75

(514) 747-6680


825 rue Manogian,
St-Laurent, QC, H4N 1Z5

ՏԵՐԵԽԱԹՎՓԸ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ՄԵՐԺ ՄՐԱՊԵՈՆԵԱՆ

Խոր ցաւով տեղեկացանք, որ երկարատեւ ծանր հիւանդութեան պատճառով կեանքէն վաղաժամ հեռացաւ գրականագէտ, մերօրեայ բացառիկ մտաւորական Մերժ Սրապիոնեանը:

Ան այն եզակի անհատներէն էր, որ ոչ միայն ազգային մտածողութեան, ազգային արժանահանակարգի կրողն էր, այլեւ՝ այդ մտածողութիւնը սերունդներուն փոխանցողն ու սերմանողը: Կը հաւատանք, որ անոր դաստիարակած սերունդը իր հետքը պիտի թողու ապագայի կերտման պատասխանատու գործին մէջ: Կը ցաւակցինք ընտանիքին, հարազատներուն ու ընկերներուն, կիսելով ծանր վիշտը:



ՅԱԲԵԹ ԹՈՐՈՍԵԱՆ

Խոր ցաւով կը գուժենք Պոստոնի մեր շրջանակի ընկերներէն Յաբէթ Թորոսեանի ցաւալի մահը, որ տեղի ունեցաւ Սեպտեմբեր 10-ին Օհայոյի մէջ: Ան ծնած էր Կեսարիա Հոկ-տեմբեր 15, 1933-ին: Երիտասարդ տարիքին կը տեղափոխուի Պոստոն, ուր կ'ունենայ ազգային հասարակական ու բարեսիրական աշխոյժ կեանք մը: Իր անձնական գործին զուգահեռ մեծապէս օգտակար կ'ըլլայ համայնքային կեանքին: Հայր երկու մանչ զաւակներու՝ Արեգ եւ Նշան:

Գաղափարական իր հնոցը, մինչեւ կեանքին վերջը մնաց Ռեմկավար Ազատական Կուսակցութիւնը: Հետագային լայնօրէն պիտի անդրադառնանք:



ԵՐՁՈ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

Հ.Բ.Ը.Մ.-ի լիբանանի Շրջանակային Յանձնաժողովը եւ Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան կեդրոնական վարչութիւնը դառն կակիծով կը գուժեն մահը Ազգային մեծ բարերար, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Իշխան» կարգի շքանշանակիր, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հ. Ե.Ը.-ի բարեկամ Երջօ Սամուէլեանի մահը, որ պատահեցաւ Սեպտեմբեր 16-ին, Պեյրոս: Մարմինը փոխադրուեցաւ Այնճարի ազգային գերեզմանատունը:



ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ԸՆԾԱՅԱԲԵՐՈՒԵՑԱԻ ՍՈՒՐԲ ՎԼԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԲԱՏՏԱՑՈՒ ՄԱՍՈՒՆՔԸ

Սեպտեմբեր 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ ընդունեց զուիցերիահայ գործարար եւ բարերար տիար Վահէ Կապրաշը, որ Սուրբ Էջմիածին այցելած էր Մայր Աթոռին ընծայաբերելու համաքրիստոնէական սուրբ Վլաս եպիսկոպոս Սեբաստացու (III-IV դ.) մատուցելով:



Նորին Սրբութեան փոխանցելով հայազգի սուրբի մատուցարանը՝ տիար Կապրաշը ուրախութեամբ ընդգծեց, որ այն Սուրբ Էջմիածինին կը նուիրաբերէ Միւռնօրինութեան եւ Մայր Տաճարի վերածման պատմական առիթով:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր հայրական սէրն ու օրինութիւնը բերաւ տիար Վահէ Կապրաշին՝ բարձրօրէն գնահատելով վերջինիս նախանձախնդիր ոգին, այլեւ հաւատարմութիւնը եւ նուիրումը հանդէպ Սուրբ Էջմիածինի:

Վեհափառ Հայրապետը նաեւ գոհունակութեամբ արձանագրեց այն օգտաշատ ծառայութիւնները, որոնք մեծաճանապարհ շարունակաբար կը մատուցէ հայրենիքին եւ Հայոց Եկեղեցոյ:

Սուրբ Վլաս եպիսկոպոսի մատուցարանը ի պահ յանձնուեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի Գանձատանը, ուր այցելու հաւատաւոր ուխտաւորները հնարաւորութիւն կ'ունենան հաղորդակից դառնալու սուրբի մատուցներէն ճառագող օրինութեան:

«ՎԱՅԱՆ ԹԵՔԵԱՆ» ՄՐՑ ԱՆԱԿԱԲԱՇՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի Թեքեան Մշակութային Միությունը յայտարարում է 2023 թուականի ստեղծագործությունների մրցույթ հետեւեալ անուանակարգերում.

- 1) Գրականություն
 - 2) Հայագիտություն
 - 3) Կերպարուեստ (գունանկար, քանդակ, գրաֆիկա)
 - 4) Դեկորատիվ-կիրառական արուեստ
 - 5) Վահան Թեքեանին նուիրում աշխատութեան համար
- Իրաքանչիւր անուանակարգում յաղթողը կը ստանայ դրամական պարգեւ՝ 1500 ԱՄՆ տոլարին համարժէք դրամ: Մրցութին կարող են մասնակցել արուեստագէտներ ինչպէս Հայաստանից, այնպէս էլ նրա սահմաններից դուրս:

«Վահան Թեքեան»
մրցանակաբաշխություն
2024 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՑ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ը

Մրցանակը՝ 1500 ԱՄՆ դոլարին
համարժէք դրամ և «Վահան
Թեքեան» մրցանակ

Մրցույթը կանցկացվի 5 անվանակարգում՝

- «Գրականություն»
- «Հայագիտություն»
- «Կերպարվեստ (գունանկար, քանդակ, գրաֆիկա)»
- «Դեկորատիվ-կիրառական արվեստ»
- «Վահան Թեքեանին նվիրված աշխատության համար»

Supported by

TEKEYAN CULTURAL
ASSOCIATION OF ARMENIA

Contacts

50 Khanjanyan Street, Yerevan 0025, Armenia
010 552 632 | 010 520 783

Մրցութին մասնակցել ցանկացողները www.armtmm.com կայքում պէտք է սեպտեմբերի 10-ից մինչեւ հոկտեմբերի 10-ը (ներառեալ) լրացնեն մասնակցութեան յայտ՝ ներկայացնելով 2023 թուականին իրենց հեղինակած աշխատանքների վերաբերեալ ճշգրիտ տեղեկատւութիւն կամ դիմեն ՀԹՄՄ գրասենեակ: Միայն կամ թերի լրացումը յայտերը չեն դիտարկուի:

Լրացուցիչ տեղեկութիւնների համար դիմել Հայաստանի Թեքեան մշակութային միութեան գրասենեակ, ամէն օր՝ բացի շաբաթ եւ կիրակի օրերից՝ ժամը 11:00-16:00-ն (հասցէ՝ Երեւան, Խանջեան 50, 2-րդ յարկ, հեռ.՝ 010-55 26 32, 010-57 02 83):

Հայաստանի Թեքեան Մշակութային Միութեան
Կեդրոնական Վարչութիւն

Tekeyan Cultural
Association



ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴՈԿՏ. ՆՈՒՊԱՐ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԱՍԵՆԱՍԵԱՅ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇՆՈՒԹԻՒՆ

Մտաւորական, լրագրող, հասարակական գործիչ եւ ՌԱԿ բազմաթիւ թերթերու կէտարեայ խմբագիր Դոկտոր Նուպար Պերպերեանի 2024 թուականի մրցանակաբաշխութեան դիմելու մեկնարկը տրուած է:

Նուպար Պերպերեանի մրցանակը կը տրուի հայկական ծագում ունեցող ուսանողներուն, որոնք կը մասնագիտանան միջազգային իրաւունքի կամ քաղաքագիտութեան մէջ:

Մրցանակաբաշխութիւնը սահմանուած է մտաւորականի կտակին համաձայն, իսկ Պերպերեան կեանքէն հեռացած է 2016 թուականի Նոյեմբեր 23ին, 94 տարեկան հասակին:

Մրցանակաբաշխութեան մասնակցելու պահանջներն են՝

1. կրնան մասնակցիլ ուսումնական հաստատութիւններու՝ հայկական ծագում ունեցող ուսանողները, որոնք գլխաւորապէս մասնագիտացած են կամ միջազգային իրաւունքի, կամ քաղաքագիտութեան մէջ:
2. դիմորդը պէտք է ամբողջական դրոյքով ներգրաւուած ըլլայ աշխարհի հաւատարմագրուած քոլէճներու կամ համալսարաններու պաքալորէայի կամ ասպիրանթուրայի ծրագիրներով:
3. դիմորդը պէտք է ներկայացնէ ամբողջական տեղեկատւութիւնը, որ սահմանուած է դիմումի ձեւով:
4. դիմորդը պէտք է ներկայացնէ քոլէճի գրագրի պատճենը:
5. դիմորդը պէտք է ներկայացնէ դիմանկար:
6. դիմումը հնարաւոր է ստանալ Tcadirector@aol.com ելեկտրոնային փոստին գրուած նամակի միջոցով:
7. դիմորդները պէտք է դիմումները ներկայացնեն ելեկտրոնային տարբերակով՝ ուղարկելով Tcadirector@aol.com հասցէով:
8. յայտերի ընդունման վերջնաժամկետը 2024 Սեպտեմբեր 30-ն է:
9. հիմնադրամի կառավարիչները 2024 թ. Հոկտեմբերին կը քուէարկեն որակաւորումը յաղթողներու օգտին՝ հաշուի առնելով իրաքանչիւր դիմումատուին ներկայացուցած դիմումը:
10. յաղթողը կամ յաղթողները կը ստանան իրենց մրցանակները 2024 Նոյեմբերին:
11. յաղթողները իրաւասու չեն կրկին դիմել մրցանակի համար:

Թ.Մ.Մ. Միացեալ Նահանգներու եւ Քանադայի
Կեդրոնական Վարչութիւն

Tekeyan Cultural Association - 755 Mt. Auburn Street - Watertown, MA 02472 U.S.A.

Մեր Արուեստագէտները - 388

ՄԻՋԱՅԷԼ ՄԱՁՄԱՆԵԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ



Միքայէլ Դաւիթի Մազմանեան ծնած է 1899-ին Թիֆլիս ու յաճախած տեղւոյն Ներսիսեան դպրոցը: 1916-ին, Նիկողայոս Մառի ցուցմունքներով պատճենահաներ է Անիի Տիգրան Հոնցի եկեղեցւոյ որմնանկարները, ապա Թիֆլիսի մէջ մասնակցած է Հայ արուեստագէտներու միութեան կազմակերպած ցուցահանդէսին:



Գրքի պալատի շէնք


- 1930-1935 եղած է Երեւանի շինարարական ինստիտուտի առաջին տնօրէնը,

- 1932-1937 «Գիպրոգոր» նախագծային բիւրոյի ճարտարապետական արուեստանոցի ղեկավար (Գեորգ Քոչարի հետ),

- 1958-1970 Երեւան նախագիծ ինստիտուտի ճարտարապետական յատկագծային արուեստանոցներու ղեկավար,

- 1957-1971 Ս. Էջմիածնի Մայր աթոռի ճարտարաշինարարական յանձնաժողովի նախագահ:

Կազմած է կառուցապատումը Նորավանհի, Սիսիանի, Տաթևի, Շինուհայրի, Վանաձորի, Ալավեր-



Սասունցի Դաւիթ



Հանրախանութ - Մանկական աշխարհ

նութը (1936-1937)

- Գրապալատի համալիրը (1935-1940)

- Աջափնեակ բնակելի թաղամասը (1955-1965)

Միքայէլ Մազմանեանի գլխաւորութեամբ մշակուած է Երեւանի տարբեր թաղամասերու մէջ 1 միլիոն բնակիչի համար գլխաւոր յատկագիծը:



CALOUSTE GULBENKIAN
FOUNDATION
ARMENIAN COMMUNITIES



Նախաձեռնութեամբ՝ Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան

Գործակցութեամբ՝ Ամերիկայի Արեւմտեան Թեմի Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմնին

ՈՒՍ ՀԱՐԹԱԿ

Հայերէնով դասաւանդող Սփիւռքի ուսուցիչներուն
վերամշակման առցանց ձեռնարկը
կը յայտարարէ իր վերամուտը՝

28 Սեպտեմբեր 2024-ին
Լուս Անճելոսի ժամով՝ առտուան 11:30-ին
Փարիզի ժամով՝ իրիկուան 8:30-ին

Ուս Հարթակին նպատակն է՝ ժամանակակից մօտեցումով հայ դպրոցներէն ներս ուսուցիչներուն աշխատանքը դարձնել աւելի արդիւնաւետ եւ ներկայացուած նիւթերը՝ աւելի իմաստալից ու հայ մանուկին հաճելի:

Հանդիպումները տեղի պիտի ունենան Սեպտեմբեր 2024-էն Յունիս 2025, ամիսը երկու անգամ, Շաբաթ օրերը, իւրաքանչիւր երկու ժամ տեսողութեամբ:

Մասնակցիլ փափաքողները կրնան գրել հետեւեալ հասցէին՝

contact@ooshartag.com